«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ ՖՐՈՒՄԿԻՆ
1929 թ. Հուլիսի 5

ԶՐԻ

*Գավառակային (գավառային) գործկոմների և նրանց կողմից մասնակից դարձված կոնտրագենտների (վարկային հիմնարկների, խնայդրամարկղների, գյուղատնտ. վարկային ընկերությունների և փոստհեռձեռնարկությունների համար):*

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ 3-ՐԴ ՆԵՐՔԻՆ ՇԱՀՈՂ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՅԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Հրատարակվում է ԽՍՀՄ ԿԳԿ յեվ ԺԿԽ 1929 թ. հունիսի 19-ի վորոշման 15-րդ հոդ. հիմունքով)

336.3
Ռ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ—1929

T MAR 2010

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՖՐՈՒՄԿԻՆ
1929 թ. Հուլիսի 5

336.3
Խ-11

ԶՐԻ

*Գավառակային (գավառային) գործկոմների և նրանց կողմից մասնակից դարձված կոնտրագենտների (վարկային հիմնարկների, խնայդրամարկղների, գյուղատնտ. վարկային ընկերությունների և փոստհեռաձեռնարկությունների համար)։*

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ 3-ՐԴ ՆԵՐՔԻՆ ՇԱՀՈՂ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՅԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Հրատարակվում է ԽՍՀՄ ԿԳԿ յեվ ԺԿԽ 1929 թ. հունիսի 19-ի վորոշման 15-րդ հոդ. հիմունքով)

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ—1929

1 SEP 2013
18694

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
Գրառեգլիտվար 2714 բ. Պատվեր 4830
Տիրաժ 1000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՅԽ ԱРМ. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
6047-53

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ 3-ՐԴ ՆԵՐՔԻՆ ՇԱՀՈՂ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՅԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Հրատարակվում է ԽՍՀՄ ԿԳԿ յեվ ԺԿԽ 1929 թ. հունիսի 19-ի վորոշման 15-րդ հոդ. հիմունքով)

1. Փոխառության իրացման ժամկետը՝ գյուղական վայրերում.— *Ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերի իրացումը գյուղական վայրերում, ներքևում նշված արտոնյալ պայմաններով, սկսվում է 1929 թ. սեպտեմբերի 1-ից և կատարվում է մինչև 1929 թ. դեկտեմբերի 1-ը, այսինքն 3 ամսվա ընթացքում:*

2. Փոխառության իրացման կամավոր կարգը.— *Փոխառության պարտատոմսերի իրացումը կատարվում է կամավոր կերպով: Փոխառության իրացման ժամանակ վարչական ստիպողական միջոցների գործադրությունը* կտրականապես արգելվում է:

3. Փոխառության իրացման օրգանները գյուղական վայրերում.— *Փոխառությունն իրացնելու ամբողջ աշխատանքի ղեկավարությունը գյուղական վայրերում գավառակային (գավ.) գործկոմների վրա յե դրվում:*

4. *Գավառակային (գավ.) գործկոմները՝ փոխառությունն իրացնելու իրենց աշխատանքի մեջ, հաշվետու յեն համապատասխան ֆինօրգաններին, վորոնցից նրանք բոլոր ցուցումներն են ստանում՝ փոխառության իրացման մասին:*

5. *Գավառակային (գավ)գործկոմները փոխառության իրացումը վարում են գյուղխորհուրդների միջոցով: Բացի գյուղխորհուրդներից, փոխառության իրացման գործին մասնակից է դարձվում անպայման՝ իբրև գավա-*

ռակային (գավ)գործկոմների կոնտրագենտներ, վարկային հիմնարկները, խնայդրամարկղները, գյուղատնտեսական վարկային ընկերությունները և փոստ–հեռագրական ձեռնարկությունները: Գավառակային (գավ)գործկոմները փոխառության զետեղման համար հրավիրված վարկային հիմնարկներից, խնայդրամարկղներից և գյուղատնտեսական վարկային ընկերություններից պարտագրեր են վերցնում № 9 ձևով (ձևը կցվում է):

6. Փոստհեռաձեռնարկություններից գավառակային (գավ)գործկոմները գործի մեջ են քաշում իրենց հետ միասին մի կետում գտնվող կապի բաժանմունքներին կամ (узловые) գործակալություններին, վորոնցից առանձին պարտագրեր են վերցնում ըստ № 10 ձևի (ձևը կցվում է): Կապի բաժանմունքները և (узловые) գործակալությունները՝ նշված պարտագրերի հիմունքով, թե իրենք անմիջապես են վաճառում պարտատոմսերը և թե բոլոր փոստային գործակալությունների, շրջիկների և գյուղնամակատարների միջոցով, վորոնք գործում են տվյալ գավառակի (գավառի) սահմաններում:

Կապի բաժանմունքները կամ գործակալությունները գավառակային (գավ)գործկոմներից են ստանում պարտատոմսերը և բոլոր գործառնական ու ագիտացիոն նյութերը, թե իրենց համար և թե իրենց յենթակա փոստ–հեռագրական ցանցի համար՝ գավառակի (գավառի) սահմաններում:

Կապի բաժանմունքը կամ գործակալությունը՝ վոր պարտագիր է ստորագրել, գավառակային (գավ)գործկոմի հետ է վարում բոլոր հաշիվները թե իր վաճառած պարտատոմսերի համար և թե մասնակից դարձված փոստ–հեռագրական ցանցի բաժանմունքի կամ գործակալության վաճառածների համար:

Ծանոթություն.— 1. Փոստհեռաձեռնարկություններին կից խնայդրամարկղները, վորոնք հատուկ աշխատավորներ ունեն, փոխառության զետեղման մեջ են քաշվում 5 հոդ. նշված կարգով:

2. Փ. Հ. խնայդրամարկղները՝ վորոնք հատուկ աշխատավորներ չունեն, փոխառության զետեղման մեջ չեն քաշվում. այդ դեպքերում պարտատոմսերի վաճառքը կատարում են այն փոստհեռաձեռնարկությունները, վորոնց կից կան նման խնայդրամարկղներ:

7. Գավառակային (գավ)գործկոմները պարտավոր են հրահանգ տալ գյուղխորհուրդներին, ինչպես և գավառակային (գավ)գործկոմների կողմից մասնակից դարձված կոնտրագենտներին փոխառության զետեղման վերաբերյալ նրանց վրա դրված աշխատանքի ծավալի և բնույթի մասին:

Գավառակային (գավ)գործկոմները պետք է մշտապես հսկեն գյուղխորհուրդների և իրենց կոնտրագենտների փոխառության զետեղմանը վերաբերող աշխատանքի վրա, նրանց բոլոր ագիտացիոն և գործառնական նյութերը ու փոխառության պարտատոմսեր մատակարարեն և նրանց հետ պարտատոմսերի վաճառքին վերաբերող հաշիվները տեսնեն:

Գավառակային (գավ)գործկոմները՝ իրենք պարտատոմս չեն վաճառում:

8. Գյուղական վայրերում գտնվող Պետբանկի հիմնարկները մասնակցում են փոխառության իրացմանը՝ կենտրոնացման պայմանագրի հիմունքով, վոր կնքել են իրար հետ ԽՍՀՄ ՑԺԿ և Պետբանկի Վարչությունը: Փոխառության իրացմանը վերաբերող բոլոր հաշիվները Պետբանկի այդ հիմնարկները վարում են համապատասխան գավառակային (գավ)գործկոմների հետ,



վորոնց նրանք բոլոր հաշիվներն են տալիս և վորոնցից պարտատոմսեր են ստանում իրացման համար:

9. Գյուղխորհուրդները, բացի նրանից, վոր իրենք անմիջապես պարտատոմսեր պետք է վաճառեն, փոխառության իրացման համար նրանք պետք է մասնակից դարձնեն նաև անհատական կոնտրագենտների, ի դեմս ուսուցիչների, գյուղատնտեսների, խրճիթվարների, ակտիվ գյուղացիների և ուրիշների: Բացի դրանից, գյուղխորհուրդները, յերբ իրենց կարծիքով այդ նպատակահարմար է, կարող են փոխառության իրացման մասնակից դարձնել՝ վորպես իրենց կոնտրագենտների, այն հիմնարկներին և կազմակերպություններին, վորոնց գավառակային (գավ)գործկոմները գործի չեն կանչել: Գյուղխորհուրդներն այդ հիմնարկներին և կազմակերպություններին գործի յեն ներգրավում նույն հիմունքներով, ինչ հիմունքներով մասնակից են դարձվում անհատական կոնտրագենտները:

Գյուղխորհուրդներն իրենց գործի դրած կոնտրագենտներից պարտագիր են վերցնում սրան կից № 1 ձևով: Այդ պարտագրով կոնտրագենտները պարտատոմսերը վաճառում են կանխիկ հաշվով: Գյուղխորհուրդները կարող են նույնպես կանխիկ հաշվով պարտատոմսեր վաճառող իրենց կոնտրագենտներին հանձնել գյուղացիներից պարտատոմսերի բաժանորդագրության հավաքելու գործը՝ մաս–մաս վճարման պայմանով. այդ դեպքերում գյուղխորհուրդները կոնտրագենտներից առանձին պարտագրեր են վերցնում՝ կցված № 2 ձևի:

10. Ֆինօրգանից ներկա հրահանգն ու ցուցումներն ստանալուց հետո, գավառակային (գավ)գործկոմը հատուկ խորհրդակցության է հրավիրում իրացման գործի մեջը մտնող գյուղխորհուրդների, հիմնարկների և կազմակերպությունների ներկայացուցիչներին: Այդ խորհրդակցության մեջ քննարկվում են փոխառության իրացման վերաբերյալ խնդիրները և հրահանգներ են տրվում գյուղխորհուրդներին և կոնտրագենտներին նրանց վրա դրված այն աշխատանքի բնույթի մասին, վոր փոխառության տարածմանն է վերաբերում: Գյուղխորհուրդների և գյուղական կոնտրագենտների աշխատանքի հետագա ղեկավարությունը կայանալու յե նրանում, վոր գավառակային (գավ)գործկոմի աշխատակիցները մեկնեն տեղերը, գյուղխորհուրդների հաշվետվությունը լսեն՝ իրացման ընթացքի մասին:

11. Գավառակային (գավ)գործկոմները փոխառության պարտատոմսերն ու գործառնական և ագիտացիոն բոլոր անհրաժեշտ նյութերն ստանում են համապատասխան ֆինօրգաններից: Գավառակային (գավ)գործկոմներն էլ իրենց հերթին գյուղխորհուրդներին և իրենց կոնտրագենտներին են մատակարարում պարտատոմսեր և գործառ–ագիտացիոն նյութերը: Գյուղխորհուրդներն էլ պարտատոմսերը և նշված նյութերը մատակարարում են իրենց կանչած անհատական մյուս կոնտրագենտներին:

12. Հասարակայնության աջակցությունը փոխառության իրացման կամպանիային՝ գյուղական վայրերում.— Ինդուստրացման 3–րդ փոխառության իրացման կամպանիան գյուղական վայրերում հաջողությամբ մղելու համար՝ պետք է ապահովված լինի գյուղի բոլոր կուսակցական, արհմիութենական, խորհրդային և այլ հասարակական հիմնարկների և կազմակերպությունների աջակցությունը:

Նշված հիմնարկների և կազմակերպությունների գործունեության միասնությունն ու աշխատանքի ղեկավարությունը՝ փոխառության իրացման և ժողովրդականացման խնդրում, իրագործում են գավառակային (գավ)գործկոմներին և գյուղխորհուրդներին կից կազմակերպված պետվարկին և խնայողական գործին աջակցող մշտական հանձնաժողովները: Ոժանդակող այդ հանձնաժողովները, վորպես մշտական գործողներ, պետք է կազմակերպվեն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1929 թ. 15/5 վորոշման հիմունքով: Բացի նշված ոժանդակող հանձնաժողովներից, պետք է նույնպես ոժանդակող մշտական հանձնաժողովներ կազմակերպվեն գյուղական վայրերում տեղավորված ձեռնարկություններում և հիմնարկներում:

13. Գավառակային (գավ)գործկոմներին կից ոժանդակող հանձնաժողովները կազմվում են գավառակային (գավ)գործկոմի նախագահի նախագահությամբ և ՀԱՄԿԿ(բ) գավառակային (գավ)կոմի, ԼԿՅԵՄ քարտուղարի և տեղական կոոպերատիվ կազմակերպությունների և փ. հ. ձեռնարկությունների ներկայացուցիչների կազմով: Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները կազմվում են գյուղխորհրդի նախագահի նախագահությամբ և ՀԱՄԿԿ(բ) և ԼԿՅԵՄ տեղական բջիջների, փոխառության իրացման մեջ ներգրավված հիմնարկների և կազմակերպությունների ներկայացուցիչների կազմով, ինչպես և մասնակցությամբ գյուղական ակտիվի առանձին անհատների, վորոնց գյուղխորհուրդն է նշանակում:

Նշված ոժանդակող հանձնաժողովների վրա հետևյալ աշխատանքն է դրվում՝ ա) փոխառությունն իրացնելու աշխատանքի ծրագրի մշակումը, բ) մոբիլիզացիայի յենթարկել հասարակական և խորհրդային ապարատը՝ կամպանիային աջակցելու համար, գ) լայն ագիտացիա մղել փոխառության մասին, դ) տեղական պայմանների համար հնարավոր բոլոր յեղանակները վորոնել ու գտնել ազգաբնակությունը գրավելու փոխառության պարտատոմսեր գնելու համար. . յե) ստորադաս ոժանդակող հանձնաժողովների աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը. զ) փոխառությունը զետեղող կազմակերպությունների զեկուցումների քննությունը և է) հասարակական վերահսկողության իրագործումը նրանց աշխատանքի վրա:

14. Ձեռնարկություններում և հիմնարկներում ոժանդակող հանձնաժողովները ստեղծվում են վարչության, կուսակցության բջիջների, բանվորների և ծառայողների ներկայացուցիչների կազմով, ինչպես և այն անդամների մասնակցությամբ, վորոնց ընտրում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի բանվորների և ծառայողների ընդհանուր կամ պատգամավորական ժողովները: Տեղական այդ հանձնաժողովները ստեղծվում են թե կոլեկտիվ բաժնեգրություն կազմակերպելու և անցկացնելու համար և թե մշտական ագիտացիոն աշխատանք տանելու և փոխառության վերաբերող տեղեկանքներ տալու համար ձեռնարկություններում և հիմնարկներում:

15. Փոխառությունն իրացնելու աշխատանքի կազմակերպումը՝ գյուղական վայրերում.— *Ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերը գյուղացիության բոլոր խավերում հաջողությամբ իրացնելու նպատակով՝ գավառակային (գավ)գործկոմները և շրջանային (գավառային) ու գյուղական ոժանդակող հանձնաժողովներն առաջին հերթին պետք է միջոցներ ձեռք առնեն գյուղացիությանը լայնորեն ծանոթացնելու փոխառության խնդիրներին, նպատակներին և պարտատոմսեր ձեռք բերելու պայմաններին:*



Փոխառության մասին զանազան յեղանակներով տեղեկանքներ տալու և գյուղացիության մեջ ագիտ-գրականություն տարածելու հետ միասին, պետք է ամեն մի գյուղում, տվյալ գյուղի բոլոր բնակիչների մասնակցությամբ, համայնական ժողովներ տեղի ունենան: Ժողովներում զեկուցումներ պետք է տրվեն փոխառության մասին:

Դրա հետ միասին գավառակային (գավ)գործկոմները, գյուղխորհուրդները և աջակցող հանձնաժողովները ձեռք են առնում բոլոր միջոցները, վորպեսզի գյուղի բոլոր բնակիչները հարցաքննման յենթարկվեն, թե կկամենա՞ն փոխառության պարտատոմս ձեռք բերել: Կազմակերպվելիք հարցաքննությունը վոչ մի դեպքում չպետք է փոխառությունը բաժանորդագրվելու համար վորևէ ստիպողական ձև ընդունի, այլ պետք է ոգտագործվի փոխառության նպատակներն ու պայմանները լուսաբանելու, ինչպես և այն ոգուտները, վոր պարտատոմսերը ձեռք բերելու հետ են կապված:

Բնակչությանը տեղեկություններ պետք է տրվեն և այն մասին, վոր փոխառության յեկամտի 10%-ը մասնատրվում է տեղական շրջանային (գավառային) բյուջեյին գյուղական շինարարության կարիքների համար: Այդ հանգամանքը պետք է ոգտագործել փոխառության ագիտացիոն կամպանիայի համար: Ամեն մի շրջան (գավառ) յելակետ ունենալով փոխառությունից ստացվելիք յենթադրական գումարը, վոր իրացվելու յե իր տերրիտորիայի վրա, կամպանիայի սկզբում վորոշում է, թե ինչ ձեռնարկության վրա յե ծախսվելու 10 տոկոսային մասնատրումը: Այս մասին պետք է լայնորեն իրազեկ անել բնակչությանը՝ համայնական ժողովներում, տեղական մամուլի միջոցով և այլն:

16. Պարտատոմսերի վաճառքի ընդհանուր պայմանները՝ գյուղական վայրերում.— *Ինդուստրացման 3-րդ փոխառության իրացումը գյուղական վայրերում կատարվում է պարտատոմսերի թե կանխիկ հաշվով վաճառելու և պարտատոմսերի ամբողջ արժեքը միանվագ վճարելու ճանապարհով և թե ձեռք բերելիք պարտատոմսերի գինը մաս-մաս վճարելով:*

Մաս-մաս վճարելու հնարավորությունը տրվում է բոլոր գյուղացիներին, վորոնք ընտրական իրավունքով են ոգտվում և պարտատոմսեր են ձեռք բերում թե անհատապես և թե աշխատավորական միավորների միջոցով, ինչպես և բանվորներին ու ծառայողներին, վորոնք պարտատոմսեր են ձեռք բերում կոլլեկտիվ բաժանորդագրության կարգով:

Ամեն մարդ կարող է նույնպես պարտատոմսեր ձեռք բերել նաև կանխիկ վճարման հաշվով:

Գյուղխորհուրդները պարտատոմսեր վաճառում են՝

ա) կանխիկ վճարումով և

բ) մաս-մաս վճարումով՝ գյուղացիներին:

Գավառային (գավ)գործկոմների կողմից փոխառության իրացման մասնակից դարձված վարկային հիմնարկները, խնայդրամարկղները և գյուղատնտեսական վարկային ընկերությունները պարտատոմսերը վաճառում են՝

ա) կանխիկ վճարումով,

բ) բանվորների և ծառայողների կոլլեկտիվներին՝ կոլլեկտիվ բաժանորդագրության կարգով և

գ) գյուղացիներին՝ մաս-մաս վճարումով:

Գյուղխորհուրդների կողմից գործին մասնակից դարձված կոնտրագենտ

անձերն ու կազմակերպությունները պարտատոմսերը վաճառում են միայն կանխիկ հաշվով:

Սակայն, գյուղխորհուրդները կարող են հանձնարարել իրենց կոնտրագենտներին ներքևում նշված 26–28 հոդ. հոդ. հիմունքով փոխառության պարտատոմսերի համար բաժանորդագրությունն անցկացնել գյուղացիների մեջ մաս-մաս վճարման կարգով:

Գավառակային (գավ) գործկոմների կողմից գործին մասնակից դարձված փոստհեռաձեռնարկությունները, ինչպես գյուղխորհուրդները, կարող են պարտատոմսեր վաճառել, թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարումով:

17. Գյուղացիներին պարտատոմսեր վաճառելու պայմանները.—Գյուղացիները կարող են պարտատոմսեր ձեռք բերել թե կանխիկ և թե մաս-մաս վճարման հաշվով:

18. Պարտատոմսերի վաճառքը կանխիկ հաշվով գյուղական վայրերում.—Ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսերի վաճառքը կանխիկ հաշվով, գյուղական վայրերում կատարվում է իրացման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում հետևյալ գներով՝

| ՎԱՃԱՌՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ | Ամբողջ պարտատոմսի համար (50 ռուբ.) | Պարտատոմսի 1/10-րդ մասի համար (5 ռուբ.) |
|---|---|---|
| 1929 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 10-ը ներառյալ | 47 ռ. 90 կ. | 4 ռ. 79 կ. |
| » » 11-ից » 20-ը » | 48 ռ. 10 կ. | 4 ռ. 81 կ. |
| » » 21-ից » 30-ը » | 48 ռ. 40 կ. | 4 ռ. 84 կ. |
| » հոկտեմբերի 1-ից » 10-ը » | 48 ռ. 60 կ. | 4 ռ. 86 կ. |
| » » 11-ից » 20-ը » | 48 ռ. 90 կ. | 4 ռ. 89 կ. |
| » » 21-ից » 31-ը » | 49 ռ. 10 կ. | 4 ռ. 91 կ. |
| » նոյեմբերի 1-ից » 10-ը » | 49 ռ. 40 կ. | 4 ռ. 94 կ. |
| » » 11-ից » 20-ը » | 49 ռ. 60 կ. | 4 ռ. 96 կ. |
| » » 21-ից » 20-ը » | 49 ռ. 90 կ. | 4 ռ. 99 կ. |

19. Գյուղական վայրերում կանխիկ հաշվով պարտատոմսեր են վաճառում գյուղխորհուրդները, խնայդրամարկղները, վարկային հիմնարկները, գյուղատնտ. վարկային ընկերությունները, փոստհեռաձեռնարկությունները, ինչպես և գյուղխորհուրդների կողմից փոխառության իրացման գործին կանչված անհատական կոնտրագենտները և այլ հիմնարկներ ու կազմակերպությունները, վորոնց գյուղխորհուրդը կարևոր կհամարի կանչել, վորպես իր կոնտրագենտների:

20. Գյուղական վայրերում իսկական պարտատոմսերը կարող են վաճառվել միայն կանխիկ հաշվով:

Կանխիկ հաշվով պարտատոմսեր վաճառելը ժամանակավոր անդորրագրերով, գյուղական վայրերում չի թույլատրվում:

21. Գավառակային (գավ)գործկոմը կանխիկ հաշվով վաճառելու համար պարտատոմսեր է մատակարարում գյուղխորհուրդներին և իր կոնտրագենտներին (վարկային հիմնարկներ, խնայդրամարկղներ, գյուղատնտ. վարկային ընկերություններ և փոստհեռաձեռնարկություններ:

Գյուղխորհուրդներն էլ իրենց հերթին կանխիկ հաշվով վաճառելու հա-



մար պարտատոմսեր են տալիս իրենց կոնտրագենտներին:

Պարտատոմսերի սկզբնական ավանսը տրվում է մի այնպիսի գումարի, վորը կարող է վաճառվել, օրինակ 10 օրվա ընթացքում:

Հետագայում պարտատոմսերի ավանսը լրացվում է տրված սկզբնական պարտատոմսերի վաճառքի չափի հարաբերությամբ:

Գյուղական վայրերում տարածելու համար նախորոշված են բացառապես բաժանելի պարտատոմսերի մեկ տասներորդական մասերը, այսինքն 5 ռուբլիանոց մասերը:

22. Կանխիկ վճարով վաճառելու համար կանխորոշված պարտատոմսերից գավառակային (գավ)գործկոմները պետք է կտրեն ամրացման տալոնները և տալոնների արմատները:

Այդ տալոնները և նրանց կից արմատները պետք է պահվեն գավառակային (գավ)գործկոմներում: Այն դեպքում, յեթե պարտատոմսերի մի մասը, վորոնցից կտրված են տալոնները, չվաճառվի, այդ պարտատոմսերը պետք է ամրացվեն մաս-մաս վճարումով բաժանորդների վրա:

Ուստի, այդ պարտատոմսերի համարները բաժանորդների վրա հաստատելու համար, պետք է պահվեն ամրացման տալոններն ու նրանց կից արմատները:

Վորպեսզի հեշտ լինի ջոկել համապատասխան պարտատոմսերի տալոններն ու արմատները, գավառակային (գավ)գործկոմները պարտատոմսերից կտրված տալոնները, արմատներով միասին պահում են առանձին ծրարների մեջ, ծրարի վրա նշանակելով այն գյուղխորհրդի անունը, վորին տրված են պարտատոմսերը:

Ի նկատի ունենալով, վոր ամրացման տալոնները կտրված պարտատոմսերի ոգտագործումը մաս-մաս վճարման վաճառքով դժվարին է, ուստի գավառակային (գավ)գործկոմները պարտատոմսերի մի այնպիսի քանակից միայն պետք է կտրեն տալոնները, վորն իրոք կարող է կանխիկ հաշվով վաճառվել:

23. Պարտատոմսերի վաճառքը մաս-մաս վճարումով.—Պարտատոմսերի վաճառքը մաս-մաս վճարումով կատարվում է իրացման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում (1929 թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը) անվանական գներով:

24. Շրջանային (նահ.)գործկոմները մաս-մաս վճարման ժամանակի տևողությունն իրենց շրջանի (նահանգի) համար սահմանում են, համակերպելով տեղական ազգաբնակչության յեկամուտների բնույթին:

Սակայն, մաս-մաս վճարման ժամանակի տևողությունը 6 ամսից ավելի լինել չի կարող:

Փոխառության իրացման այդպիսի կարգը գյուղացիության մեջ առաջ է գալիս հետևյալ նկատառումներով՝ յերկարատև մաս-մաս վճարումն իրեն արդարացնում է այն դեպքերում, յերբ բաժանորդներն ամսական և հավասարաչափ յեկամուտ ունեն, վորից պարտատոմսերի վճարն է տրվում: Այդ պատճառով է, վոր բանվորներին և ծառայողներին տասն ամսով մաս-մաս վճարումով պարտատոմսերը տալը հնարավորություն է տալիս փոխառության բաժանորդագրությունը զգալի գումարների հասցնել, վորը միջին հաշվով ամեն մի բաժանորդի ամսական աշխատավարձին է հավասար:

Ինչ վերաբերում է գյուղացիությանը, վորն իր ճնշող մեծամասնու-

թյամբ մշտական ամսական եկամուտ չունի և իր տնտեսությունից եկամուտներ է ստանում որոշ ժամանակամիջոցում, 3–4 ամիս, ուստի ազգաբնակչության այդ խավի համար տևական մաս–մաս վճարումը նպատակահարմար չէ:

Սրա հետ միասին, ինչ չափով որ գյուղացիների զանազան առանձին խմբերի եկամուտների բնույթը տարբեր է (եկամուտ երկրագործությունից, անասնապահությունից, տարագնաց կամ տնայնագործական աշխատանքից), այդ չափով էլ աննպատակահարմար կլիներ մաս–մաս վճարման միասնական ժամկետ սահմանել գյուղացիության ամբողջ մասսայի համար:

Այս բանի հետևանքով շրջ. (նահ.) գործկոմներին իրավունք է տրվում ամեն մի շրջանի (նահանգի) համար մաս–մաս վճարման տևողություն սահմանել, որ տրվելու յե գյուղացիներին—փոխառության բաժանորդներին:

Պարտատոմսերի մաս–մաս վճարումով վաճառքը՝ շրջ.(նահ.)գործկոմի սահմանած ժամկետով, կատարվում է գյուղական ամբողջ ազգաբնակության մեջ, որ ընտրական իրավունքով է օգտվում: Մաս–մաս վճարումով վաճառքն առաջարկվում է գյուղացիներին, անկախ այն բանից, թե պարտատոմսերի բաժանորդագրությունը անհատապե՞ս է կատարվում, թե՞ գյուղական աշխատավորական միավորների միջոցով (արտելներ, կոոպերատիվ ընկերություններ և այլն):

10–ամսյա մաս–մաս վճարումը, ինչպես նշված է հրահանգի 45–րդ հոդ., առաջարկվում է միայն բանվորներին և ծառայողներին, վորոնք փոխառությանը բաժանորդագրվել են իրենց կոլլեկտիվների միջոցով: Իսկ յեթե բանվորը կամ ծառայողը փոխառությանն անհատապես բաժանորդագրվեր, պարտատոմսերը կը վաճառվեյին նրան նույն պայմաններով, ինչ պայմաններով վոր վաճառվում են գյուղացիներին:

**25. Շրջ. (նահ.)գործկոմների սահմանած ժամկետի ընթացքում պարտատոմսերի վճարումը կատարվում է ամեն ամիս, հավասար մասերով:**

Այսպես, օրինակ, յեթե տվյալ շրջանի համար մաս–մաս վճարման ժամկետը 6 ամիս է սահմանված, սեպտեմբերին 60 ռուբ. բաժանորդագրված գյուղացին վճարում է ամսական 10 ռ., սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսների ընթացքում, յեթե նա նույն գումարի բաժանորդագրվեր հոկտեմբերին, պարտատոմսերի վճարումները պետք է մտցներ 6–ամսյա մուծումներով, ամեն մեկը 10 ռուբլով, սկսած հոկտեմբերից և վերջացնելով մարտին: Իսկ յեթե նա բաժանորդագրվի նոյեմբերին, ուրեմն պարտատոմսերին պետք է վճարի նա նույնանման մուծումներով սկսելով նոյեմբերից և վերջացնելով ապրիլով:

**26. Պարտատոմսերի մաս–մաս վճարումով վաճառքի կազմակերպումը գյուղխորհուրդների կողմից.**—Գյուղխորհուրդները լայնորեն պետք է կազմակերպեն ինդուստրացման 3–րդ փոխառության պարտատոմսերի բաժանորդագրությունը գյուղացիների մեջ, մաս–մաս վճարումով:

Գյուղխորհուրդները թե իրենք են կատարում նշված բաժանորդագրությունը և թե հանձնարարում են այն, ինչպես և բաժանորդներից դրամ հավաքելը, իրենց կոնտրագենտներին (անձերին և հիմնարկներին), վորոնց մասնակից են դարձրել փոխառության իրացման պարտատոմսերը կանխիկ հաշվով վաճառելու համար:



Կոնտրագենտից, վորին հանձնարարվում է բաժանորդագրություն կատարելը և պարտատոմսերի համար բաժանորդներից մուծումներն ստանալը, գյուղխորհուրդը հատուկ պարտագիր է վերցնում, կցված № 2 ձևի:

**27.** Գյուղացիները կարող են պարտատոմսերի մաս–մաս վճարումով բաժանորդագրվել թե անհատապես և թե այն կոլլեկտիվի միջոցով, վորի կազմի մեջն են մտնում իրենք (այսինքն՝ արտելի, կոոպերատիվ ընկերության, կոլտնտեսության կամ վորևե աշխատավորական միության միջոցով): Այս դեպքում գյուղխորհուրդը բաժանորդագրության գործը գյուղացիների մեջ—աշխատավորական միության անդամների, կարող է հանձնարարել այն վարչությանը, վոր գլխավորում է տվյալ աշխատավորական միությունը (օրինակ՝ կոոպերտիվ ընկերության կամ արտելի վարչությանը և այլն): Աշխատավորական միությունների վարչությունները, ինչպես և գյուղխորհրդի կոնտրագենտները պարտատոմսերի համար բաժանորդագրություն են կատարում իրենց անդամների մեջ, նրանցից պարտատոմսերի համար մուծումներ են ստանում և հավաքած դրամները մտցնում են գյուղխորհուրդ: Ուստի աշխատավորական այն միությունների վարչություններից, վորոնց հանձնարարվում է բաժանորդագրություն կազմակերպել իրենց անդամների մեջ և պարտատոմսերի համար նրանցից մուծումներ հավաքել, գյուղխորհուրդները նույնպես պարտագրեր են վերցնում № 2 ձևի:

**28. Ինչպե՞ս է տարվում գյուղացիների մեջ մաս–մաս վճարումով պարտատոմսեր գնելու բաժանորդագրությունը.**—Պարտատոմսերին բաժանորդագրվելը գյուղացիների մեջ տարվում է ամեն մի գյուղացու հարցափորձի յենթարկելու ճանապարհով, թե ցանկանու՞մ է նա պարտատոմսեր ձեռք բերել մաս–մաս վճարումով: Հարցափորձի ընթացքում լցվում է բաժանորդագրության հատուկ թերթ № 3 ձևի: Գյուղխորհուրդները պետք է բաժանորդաթերթեր մատակարարեն բաժանորդագրություն հավաքելու գործին ներգրավված կոնտրագենտներին, կոոպերատիվ ընկերությունների, արտելների վարչություններին և ուրիշ աշխատավորական միություններին:

Բաժանորդաթերթերի յերկրորդ սյունյակում գրվում է ազգանունը, անունը, հայրանունը այն գյուղացու, վոր ցանկություն է հայտնել պարտատոմսերին բաժանորդագրվել: Բաժանորդաթերթի 5–րդ սյունյակում, հարցափորձի յենթարկվածի ազգանվան դիմացը գրում է պարտատոմսերի ընդհանուր անվանական գումարը, վոր ցանկանում է ձեռք բերել բաժանորդը մաս–մաս վճարումով:

Հետո կոնտրագենտը պարզաբանում է, թե ինչ գումարի տոկոսաբեր–շահող տեսակի և ինչ գումարի անտոկոս շահող տեսակի պարտատոմսերի յե ցանկանում բաժանորդագրվել հարցափորձի յենթարկվող գյուղացին:

Բաժանորդագրության տոկոսաբեր պարտատոմսերի գումարը գրվում է բաժանորդաթերթի 3–րդ սյունյակում, իսկ անտոկոսինը՝ 4–րդ սյունյակում:

Դրա հետ միասին, հարց ու փորձ կատարող կոնտրագենտը պետք է բացատրի բաժանորդին, թե նրան լիակատար հնարավորություն է տրվում կամ բաժանորդագրվել փոխառության մեկ տեսակի պարտատոմսերին (անտոկոս կամ տոկոսաբեր) կամ ամեն մի տեսակի պարտատոմսերին, ինչ գումարի վոր կը ցանկանա ինքը՝ բաժանորդը:

Գյուղացիների բաժանորդագրությունը կարող է կատարվել միայն պարտատոմսերի 5 ռուբլիանոց մասերով:

Բաժանորդաթերթի մեջ գրված բոլոր տեղեկությունների ճշտությունը բաժանորդը հաստատում է իր սեփական ստորագրությամբ բաժանորդաթերթի 6-րդ սյունյակում: Բաժանորդի անգրագիտության դեպքում, նրա ստորագրության մասին լրացած տեղեկությունների ճշտությունը հաստատվում է հարցափորձին ներկա գտնվող որևէ մեկի ստորագրությամբ:

29. Լցված բաժանորդաթերթերը կոնտրագենտները հանձնում են գյուղխորհրդին: Գյուղխորհուրդը բաժանորդների մասին լրացած տեղեկությունները բաժանորդաթերթից փոխադրում է մաս-մաս վճարումով վաճառելի պարտատոմսերի տեղեկագրի մեջ—№ 7 ձևի, ինչպես նշված է ներկա հրահանգի 68-րդ հոդվածում:

Այդ տեղեկագրի մեջ հետագայում նշանակվում են այն գումարները, վորոնք ստացվում են բաժանորդներից՝ պարտատոմսերի համար:

Նշված տեղեկագիրը լցնելուց հետո, գյուղխորհուրդները՝ տեղեկագրի հիմունքով լցնում են նույնպես հաշվի անդորրագրերը № 4 ձևի և նրանց կից արմատները:

30. Լցված հաշվեանդորրագրերը գյուղխորհուրդը տալիս է բաժանորդներին, նրանցից ստանալով առաջին մուծումը: Գյուղխորհուրդը կարող է իր կոնտրագենտներին հանձնել բաժանորդներից առաջին մուծումը հավաքելու գործը: Այդ դեպքում գյուղխորհուրդը կոնտրագենտներին է տալիս հաշվեանդորրագրերը և նրանց կից արմատները: Առաջին մուծման ստացումը բաժանորդից կոնտրագենտը գրում է թե հաշվեանդորրագրի և թե անդորրագրի արմատի մեջ, անդորրագրում ցույց տալով մուծումի գումարը և վճարման ժամանակը, իսկ արմատում՝ մուծումի գումարը: Անդորրագրի վրա կոնտրագենտը մուծման ստացումն է ստորագրում: Բաժանորդն էլ, իր հերթին, վավերացնում է կոնտրագենտի գրածն իր ստորագրությամբ անդորրագրի արմատում և նշում է արմատում մուծման վճարման ժամանակը:

Հաշվեանդորրագիրը տրվում է բաժանորդին նրանից մուծումը ստանալուց հետո, դրա հետ միասին բաժանորդը անդորրագրի ստացումը պետք է ստորագրի նրա արմատի վրա: Հաշվեանդորրագրերի արմատները, ստացված դրամների հետ միասին, կոնտրագենտներն անմիջապես հանձնում են գյուղխորհրդին, բայց, համենայն դեպս, վոչ ուշ, քան 10 որվա ընթացքում:

31. Հետագա ամեն մի մուծումը գյուղխորհուրդն ինքն է ստանում կամ հանձնում է իր կոնտրագենտներին: Վերջին դեպքում գյուղխորհուրդը կոնտրագենտին է տալիս այն բաժանորդների հաշվեանդորրագրերի արմատները, վորոնցից կոնտրագենտը պետք է մուծումները հավաքի:

Հետևյալ մուծումների ընդունելությունը կոնտրագենտը պարտավոր է ձևակերպել այն կարգով, վորը նշված է 30-րդ հոդ. բաժանորդներից առաջին մուծումը հավաքելու համար, այսինքն կոնտրագենտն իր ստացած դրամների գումարը մտցնում է հաշվեանդորրագրի մեջ, վորը գտնվում է բաժանորդի ձեռքին, և գրածը վավերացնում է իր ստորագրությամբ. բաժանորդից ստացած մուծումի գումարը կոնտրագենտը մտցնում է հաշվեանդորրագրերի արմատի մեջ, վորի հետ միասին այդ գրանցման ճշտությունը և դրամների վճարման ժամանակը բաժանորդը հաստատում է անդորրագրերի արմատի վրա իր ստորագրությամբ: Մուծումն ընդունող



կոնտրագենտը պարտավոր է հետևել, վոր բաժանորդն իր ստորագրությամբ անդորրագրի արմատի վրա վավերացնի մուծումի վճարման ժամանակը:

Կոնտրագենտներից հաշվեանդորրագրերի արմատները՝ հավաքված դրամների հետ միասին, ստանալուց հետո, գյուղխորհուրդը ստացված մուծումներին վերաբերող տեղեկությունները անդորրագրի արմատներից փոխադրում է № 7 ձևի տեղեկագրի մեջ:

**32. Մաս-մաս վճարումով պարտատոմսերի հատատումը բաժանորդների վրա.**—Բաժանորդը մաս-մաս վճարումով ձեռք բերած պարտատոմսերի համար առաջին մուծումը վճարելուց հետո, իրավունք է ստանում գնված պարտատոմսերի յեկամտի վրա՝ տոկոսների և շահումների, սակայն, այն պայմանով, վոր բաժանորդն իր ժամանակին մտցնի իրենից պահանջվելիք վճարումները:

33. Բաժանորդներից հավաքված առաջին մուծումները կոնտրագենտներից ստանալուց հետո, գյուղխորհուրդը սահմանված ժամկետում գավառակային (գավ)գործկոմներին է հանձնում դրամները № 8 ձևի հաշվետեղեկագրով՝ այդ տեղեկագրի հակառակ յերեսում տեղեկություններ է հաղորդում, թե վո՞րքան պարտատոմսի անհրաժեշտություն կա բաժանորդների վրա հատատելու համար:

Այդ տեղեկությունների մեջ գյուղխորհուրդը նշում է փոխառության ամեն մի տեսակի պարտատոմսերի գումարն առանձին-առանձին:

Գավառակային (գավ)գործկոմը՝ գյուղխորհրդի տված տեղեկությունների հիմունքով, նրա վրա յե հաստատում պարտատոմսերի կարևոր քանակը, կտրելով նրանից ամրացման տալոնները, տալոնների արմատների հետ միասին:

Գյուղխորհրդի համար վորոշված պարտատոմսերը պետք է դրվեն մի առանձին ծրարի մեջ և կնքվեն գավառակային (գավ)գործկոմի կնիքով: Ծրարի վրա նշվում է պարտատոմսերի գումարը և գյուղխորհրդի անունը, վորի վրա յեն հաստատված պարտատոմսերը: Ծրարի վրայի մակագրությունը վավերացվում է գավառակային (գավ)գործկոմի պատասխանատու անձերի կողմից, վորոնք պատասխանատու յեն պարտատոմսերի ամբողջության և անվնասության համար:

Պարտատոմսերից կտրված ամրացման տալոններն՝ արմատների հետ միասին, հանձնվում են գյուղխորհրդին, նրա տեղեկությունների համաձայն: Իսկական պարտատոմսերը նշված ծրարներում մնում են ի պահ գավառակի (գավ)գործկոմում մինչև գյուղխորհրդի և պարտատոմսեր գնած բաժանորդների հաշվետեսի վերջը:

34. Գյուղխորհուրդը ամրացման տալոնների և տալոնների արմատների մեջը բաժանորդների ազգանուններն է նշանակում և տալոնների վրա իր կնիքն է դնում:

Ամրացման տալոնները պետք է տրվեն բաժանորդներին: Ամրացման տալոնների արմատները մնում են ի պահ գյուղխորհրդում:

Գյուղխորհուրդները պետք է ամրացման տալոնների հանձնումը բաժանորդներին ապահովեն անպայմանորեն մինչև ինդուստրացման 3-րդ փոխառության շահումների առաջին վիճակահանությունը, վորը տեղի յե ունենալու 1930 թ. փետրվարի 1-ին:

35. Ամրացման տալոնները բաժանորդներին տրվում են նրանցից յերկ-

բորք մուծումը հավաքելու ժամանակ։ Գյուղխորհուրդը ամրացման տալոնների բաժանումը կարող է հանձնարարել կոնտրագենտին, վորը բաժանորդներից մուծումներն է հավաքում։ Տալոններն ու նրանց կից արմատները ըստորագրությամբ են հանձնվում կոնտրագենտին։ Կոնտրագենտն էլ ամրացման տալոնները տալիս է բաժանորդին, նրանից ստորագրություն առնելով տալոնի արմատի կամ հաշվեանդորրագրի արմատի հակառակ յերեսի վրա։

Տալոնները բաժանելուց հետո՝ կոնտրագենտը գյուղխորհրդին է վերադարձնում տալոնների արմատները և հաշվեանդորրագրերի արմատները բաժանորդների ստորագրություններով միասին։

Ամեն մի բաժանորդի վրա հաստատված տալոնների արմատները պետք է կարված կամ կապկար լինեն կապոցներով․ ամեն մի կապոցի վերին արմատի վրա նշվում է հաշվեանդորրագրի համարը, վորը տրված է տվյալ բաժանորդին։ Կապոցներով կարված տալոնների արմատները դասավորվում են հաշվեանդորրագրերի վրա նշված համարների կարգով և պահվում են գյուղխորհրդում մյուս փաստաթղթերի հետ միասին, փաստաթղթերը պահելու համար սահմանված կարգով։

36․ Իսկական պարտատոմսերի հանձնումը բաժանորդներին․—Գնված պարտատոմսերի լրիվ արժեքը բաժանորդից ստանալուց հետո, գյուղխորհուրդը գավառակային (գավ)գործկոմից ստանում է իսկական պարտատոմսերը և անմիջապես հանձնում բաժանորդներին, փոխանակելով ամրացման տալոնների հետ։ Պարտատոմսերի հանձնումը կատարում է ինքը՝ գյուղխորհուրդը կամ այն մարդկանց միջոցով, վորոնց նա վստահում է։

Պարտատոմսերն ստանալու համար բաժանորդը պետք է հանձնի իր մոտ յեղած ամրացման տալոններն ու հաշվեանդորրագրերը։ Պարտատոմսերը ստանալու համար բաժանորդը պետք է ստորագրություն տա հաշվեանդորրագրերի արմատի վրա։

37․ Յերբ բաժանորդը հաշվեանդորրագիրը կորցնում է․—Յերբ բաժանորդը հաշվեանդորրագիրը կորցնում է, այն գյուղխորհուրդը, վոր հաշվեանդորրագիրն է տվել, բաժանորդի հայտի համաձայն, տալիս է նրանց հաշվեանդորրագրի կրկնակը (պաճեն), վորի մեջ մտցվում են կորած հաշվեանդորրագրի արմատումը գրված բոլոր տեղեկությունները։ Հաշվեանդորրագրի արմատում նշվում է կրկնակի հանձնումը։

38․ Յերբ բաժանորդը ամրացման տալոններն է կորցնում պարտատոմսերի №№ հետ միասին․—Ամրացման տալոնի կորստի դեպքում՝ բաժանորդն իր վրա հաստատված պարտատոմսերի իրավունքը չի կորցնում։ Բաժանորդի վրա հաստատված պարտատոմսերի համարները վերականգնվում են գյուղխորհրդում պահվող տալոնների արմատներով։

Այդ դեպքում գյուղխորհուրդը բաժանորդին տեղեկանք է տալիս, նրա մեջը նշելով բաժանորդի վրա հաստատված պարտատոմսերի համարները։

39․ Թե ինչ կարգով բաժանորդը հաշվեանդորրագիրն ուրիշին կարող է տալ․—Հաշվեանդորրագրի տերը կարող է ուրիշ մարդու տալ այն։ Դրա համար նա հայտարարություն է տալիս այն գյուղխորհրդին, վորն անդորրագիրն է տվել և ներկայացնում է նրան թե հաշվեանդորրագիրը և թե ամրացման տալոնները։

Հայտարարությունն ընդունող գյուղխորհուրդը հաշվեանդորրագիրն ու տալոնները արտագրում է նոր գնորդի անունով, կատարված հանձնման մա—



սին նշելով հաշվեանդորրագրի արմատում և ամրացման տալոնների արմատներում։

Ամրացման տալոնների հանձնումը, առանց հաշվեանդորրագրի, տալոններումը նշանակված պարտատոմսերը ստանալու իրավունք չի տալիս։

40․ Յերբ բաժանորդն իր ձեռք բերած պարտատոմսերի գինը ժամկետից առաջ է վճարում․—Բաժանորդն իրավատեր է, յերբ կամենա իր գնած պարտատոմսերի արժեքը մուծել և պարտատոմսերն իր ձեռքն առնել։

Այդ դեպքում պարտատոմսերը տրվում են բաժանորդին այն կարգով, ինչ վոր նշված է այս հրահանգի 36-րդ հոդվածում։

41․ Բաժանորդագրության պակասեցումը․—Բաժանորդն իրավատեր է, յերբ կամենա հրաժարվել հետագա մուծումներից։

Այդ դեպքում՝ բաժանորդի պահանջով, նրան տրվում են այնքան պարտատոմսեր, վորոնց գինը լրիվ հատուցել է բաժանորդը, մինչև մուծումներից հրաժարվելը։

Դրա հետ միասին, կանխիկ դրամով վերադարձվում է բաժանորդին այն գումարը, վոր չի ծածկում պարտատոմսի 1/10 մասի գինը (5 ռուբլիանոց մասը)․ իսկ յեթե բաժանորդը ցանկանա լրացնել պարտատոմսի այդ մեկ տասներորդ մասի գինը, այդ մասն էլ կտրվի նրան։

42․ Շահած պարտատոմսի հանձնումը բաժանորդին․—Յեթե մաս-մաս վճարումով ձեռք բերված պարտատոմսին շահում ընկնի մաս-մաս վճարման ժամկետից առաջ, բաժանորդը կարող է ժամկետառաջ վճարել պարտատոմսի արժեքը և պարտատոմսը կտրվի նրան շահումն ստանալու համար։ Այդ դեպքում ժամկետառաջ վճարված պարտատոմսը տրվում է նրան այն կարգով, ինչ վոր նշված է 36 հոդ․։

43․ Յերբ բաժանորդը պարտատոմսերի համար հերթական մուծումները չի կատարում․—Յեթե բաժանորդը պարտատոմսերի համար հերթական մուծումը սահմանված ժամկետին չի կատարում (յեթե բաժանորդը հայտ չի ներկայացրել բաժանորդագրությունը պակասեցնելու համար, ինչպես նշված է 41-րդ հոդ․) զրկվում է պարտատոմսերի վրա ունեցած իրավունքից և նրանց յեկամուտներից—տոկոսներից ու շահումներից, իսկ բաժանորդից ստացված մուծումները վերադարձվում են նրան մաս-մաս վճարման այն ժամկետից հետո, վորի ընթացքում բաժանորդը պետք է լրացներ իր վճարները։ Այդ մուծումները վերադարձնում են գավառակային (գավ)գործկոմները մինչև 1930 Թ․ սեպտեմբերի 30-ը։ Այդ ժամկետից հետո մինչև 1932 Թ․ սեպտ․ 30-ը մուծումները վերադարձնում են միայն Պետբանկի հիմնարկները։ Այդ մուծումների յետպահանջը բաժանորդները կարող են անել գյուղխորհուրդների միջոցով։ 1932 Թ․ սեպտեմբերի 30-ից հետո բաժանորդը կորցնում է իր իրավունքը իր մտցրած գումարների վրա։

Ծանոթություն․—Շրջ(գավ)գործկոմների նախագահներին իրավունք է վերապահվում բաժանորդագրության հաշվետեսների ժամանակաշրջանում թույլ տալ ընդունել բաժանորդներից այն մուծումները, վորոնք հետաձգվել են հարգելի պատճառներով։

44․ Գավառակային (գավ)գործկոմների կողմից գործին ներգրավված կոնտրագենտները (վարկային հիմնարկներ, գյուղատնտ․ վարկային ընկերություններ և փոստհեռաձեռնարկություններ) մաս-մաս վճարումով պարտատոմսեր են վաճառում գյուղացիներին նույն պայմաններով, ինչ վոր

սահմանված են գյուղխորհուրդների համար և նշված են այս հրահանգի 23—43 հոդ. հոդ.:

45. Փոխառության կոլլեկտիվ բաժանորդագրության պայմանները քանվորների և ծառայողների համար՝ գյուղական վայրերում.—Գյուղական վայրերում տեղավորված ձեռնարկությունների, հիմնարկների և խորհրդ. տնտեսութ. բանվորներն ու ծառայողները կարող են ինդուստրացման 3-րդ փոխառության պարտատոմսեր ձեռք բերել կոլլեկտիվ բաժանորդագրության կարգով մաս-մաս վճարումով տաս ամիս ժամկետով:

Պարտատոմսերի վաճառքը կոլլեկտիվ բաժանորդագրության կարգով կատարվում է երացման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում (1929 թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը) անվանական գնով:

46. Կոլլեկտիվ բաժանորդագրությամբ ձեռք բերվելիք պարտատոմսերի առաջին մուծումը կարող է տեղի ունենալ 1929 թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ:

Կոլլեկտիվ բաժանորդագրության վերջին մուծումը պետք է կատարվի 1930 թ. հուլիսի 1-ին:

Մաս-մաս վճարման ժամանակի տևողությունը 10 ամսվա սահմաններում ինչպես և մուծումների չափերը պարտատոմսերի համար, կոլլեկտիվ բաժանորդագրության ժամանակ վորոշվում են նրանով, թե առաջին մուծման ժամկետը յե՞րբ է յեղել:

Կոլլեկտիվ բաժանորդագրության նշված պայմաններին համապատասխան՝ բանվորների և ծառայողների կոլեկտիվների ձեռք բերելիք պարտատոմսերի վճարի համար հետևյալ կարգն է վորոշվում:

(Տես աղյուսակ եջ 17):



6047-53

| Մուծումները | ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ | Առաջին մուծումը սեպտ. 1-ին վճարելու դեպքում | | | Առաջին մուծումը սեպտ. 16-ին վճարելու դեպքում | | | Առաջին մուծումը հոկտ. 1-ին վճարելու դեպքում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ամբողջ պարտատոմսի համար (60 ռ.) | Պարտատոմսի 1/2 մասի համար (25 ռ.) | Պարտատոմսի 1/10 մասի համար (5 ռ.) | Ամբողջ պարտատոմսի համար (50 ռ.) | Պարտատոմսի 1/2 մասի համար (25 ռ.) | Պարտատոմսի 1/10 մասի համար (5 ռ.) | Ամբողջ պարտատոմսի համար (50 ռ.) | Պարտատոմսի 1/2 մասի համար (25 ռ.) | Պարտատոմսի 1/10 մասի համար (5 ռ.) |
| | | 21 մուծում | | | 20 մուծում | | | 19 մուծում | | |
| | | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. |
| 1 | 1929 թ. սեպտեմբ. 1 (օգոստ. 2-րդ կեսի հաշվ. | 2—50 | 1—25 | — 25 | — | — | — | — | — | — |
| 2 | » » 16 սեպտ. 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | — | — | — |
| 3 | » հոկտեմբ. 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 |
| 4 | » » 16 հոկտ. 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 |
| 5 | » նոյեմբ. 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 |
| 6 | » » 16 նոյեմբ. 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 |
| 7 | » դեկտեմբ. 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 |
| 8 | » » 16 դեկտ. 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 9 | 1930 թ. հունվարի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 10 | » » 16 հունվ. 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 11 | » փետրվարի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 12 | » » 16 փետրվ. 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 13 | » մարտի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 14 | » » 16 մարտի 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 15 | » ապրիլի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 16 | » » 16 ապրիլի 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 17 | » մայիսի 1 » 2-ին » » | 2— | 1— | — 20 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 18 | » » 16 մայիսի 1-ին » » | 2 — | 1 — | — 20 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 19 | » հունիսի 1 » 2-րդ » » | 2 — | 1 — | — 20 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 20 | » » 16 հունիսի 1-ին » » | 2 — | 1 — | — 20 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |
| 21 | » հուլիսի 1 » 2-րդ » » | 2 — | 1 — | — 20 | 2—50 | 1—25 | — 25 | 2—50 | 1—25 | — 25 |

| Մուծումներ | ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ | Առաջին մուծումը հոկտ. 16-ին վճարելիս | | | Առաջին մուծումը նոյեմբ. 1-ին վճարելիս | | | Առաջին մուծումը նոյեմբ. 16-ին վճարելիս | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ամբողջ փայով փայատերեր (50 ռ.) | Փայատերեր 1/2 փայով (25 ռ.) | Փայատերեր 1/10 փայով (5 ռ.) | Ամբողջ փայով փայատերեր (50 ռ.) | Փայատերեր 1/2 փայով (25 ռ.) | Փայատերեր 1/10 փայով (5 ռ.) | Ամբողջ փայով փայատերեր (50 ռ.) | Փայատերեր 1/2 փայով (25 ռ.) | Փայատերեր 1/10 փայով (5 ռ.) |
| | | 18 մուծում | | | 17 մուծում | | | 16 մուծում | | |
| | | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. |
| 1 | 1929 թ. սեպտեմբ. 1 (օգոստ. 2-րդ կեսի աշխ.) | — | — | — | — | — | — | — | — | — |
| 2 | » » 16 սեպտ. 1-ին » » | — | — | — | — | — | — | — | — | — |
| 3 | » հոկտեմբ. 1 » 2-րդ » » | — | — | — | — | — | — | — | — | — |
| 4 | » » 16 հոկտ. 1-ին » » | 3 — | 1—50 | — 30 | — | — | — | — | — | — |
| 5 | » նոյեմբ. 1 » 2-րդ » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | — | — | — |
| 6 | » » 16 նոյեմ. 1-ին » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 7 | » դեկտեմ. 1 » 2-րդ » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 8 | » » 16 դեկտ. 1-ին » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 9 | 1930 թ. հունվար. 1 » 2-րդ » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 10 | » » 16 հունվ. 1-ին » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 11 | » փետրվար. 1 » 2-րդ » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 12 | » » 16 փետրվ. 1-ին » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 13 | » մարտի 1 » 2-րդ » » | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 14 | » » 16 մարտի 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 15 | » ապրիլի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 16 | » » 16 ապրիլի 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 17 | » մայիսի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3 — | 1—50 | — 30 |
| 18 | » » 16 մայիսի 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3—50 | 1—75 | — 35 |
| 19 | » հունիսի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3—50 | 1—75 | — 35 |
| 20 | » » 16 հունիսի 1-ին » » | 2—50 | 1—25 | — 25 | 3 — | 1—50 | — 30 | 3—50 | 1—75 | — 35 |
| 21 | » հուլիսի 1 » 2-րդ » » | 2—50 | 1—25 | — 25 | 2 — | 1 — | — 20 | 3—50 | 1—75 | — 35 |



Աղյուսակում նշված մուծումների ժամկետները կարող են տեղափոխվել, նայելով թե կոլլեկտիվներում աշխատավարձը ինչ ժամկետներով են տալիս:

Ամիսը մեկ անգամ աշխատավարձ ստացող կոլլեկտիվ բաժանորդների համար՝ ձեռք բերված պարտատոմսերի համապատասխան մուծումների չափը աղյուսակում նշված կիսամյա մուծումներից յերկու անգամ ավելանում է, միայն թե վերջին մուծումը կատարվի հունիսի աշխատավարձից:

Այն կոլլեկտիվներում վորտեղ, աշխատավարձի վճարումը ոգոստոսի 2–րդ կեսի համար կատարվում է վոչ թե սեպտեմբերին, այլ ոգոստոսի վերջին, անհրաժեշտ է յերեք մուծում ստանալ ընթացիկ բյուջ. տարում (ոգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին և վերջին): Հետագա մուծումներն այդ կոլլեկտիվները մտցնում են աղյուսակում նշված 21 մուծումի հաշվով:

47. Բանվորների և ծառայողների կոլլեկտիվ բաժանորդագրության կազմակերպումը.— Գյուղական վայրերում աշխատող բանվորների և ծառայողների մեջ կոլլեկտիվ բաժանորդագրությունը տարվում է ոժանդակող միջտական հանձնաժողովների միջոցով, վորոնք կազմվելու յեն ձեռնարկություններում և հիմնարկներում (հոդ. 14):

Աջակցության հանձնաժողովների պարտականություններն ու խնդիրները՝ կոլլեկտիվ բաժանորդագրություն տանելու մեջ, հիմնականում հանգում են հետևյալին՝ ա) իր կոլլեկտիվում լայն ագիտացիա տանել փոխառության մասին և տեղեկություններ տալ պարտատոմսերը գնելու պայմանների մասին. բ) իր կոլլեկտիվներում բաժանորդագրություն կազմակերպել. այս նպատակի համար լիազորներ են ընտրվում, վորոնց խնդիրն է կոլլեկտիվի անդամներին հարցափորձ անել փոխառությանը բաժանորդագրվելու համար և բաժանորդաթերթերը լցնելը. գ) լիազորներին հրահանգելը, նրանց բաժանորդաթերթեր մատակարարելը և նրանց աշխատանքի վրա հսկելը. դ) բաժանորդաթերթերը վարչության ներկայացնելը, յե) փոխառության մասին բաժանորդներին ամեն տեսակ տեղեկություններ տալը. զ) գավառակային (գավ) գործկոմի և այն հիմնարկի հետ կապ պահելը, վորտեղ ձևակերպված է կոլլեկտիվ բաժանորդագրությունը:

Սակայն բանվորներ և ծառայողներ ունեցող ձեռնարկություններում և հիմնարկություններում, ինչպես և մասնավոր ձեռնարկություններում, ոժանդակող հանձնաժողովները կազմակերպվում են համապատասխան խմբակային կոմիտեներին կից: Ձեռնարկության մեջ և հիմնարկում ընտրվում է լիազոր՝ բաժանորդագրությունը վարելու համար:

48. Ձեռնարկություններին, հիմնարկներին, ինչպես և խմբակային կոմիտեներին կից ոժանդակող հանձնաժողովները վարձատրություն են ստանում ¼ % այն գումարի, վոր վճարում է կոլլեկտիվը պարտատոմսեր ձեռք բերելու համար: Այդ մասնատրումը ոժանդակող հանձնաժողովները ստանում են խնայբամարկղներից, գյուղատնտեսական վարկային ընկերություններից կամ բանկից, վոր կոլլեկտիվ բաժանորդագրություն է ընդունում: Վարձատրության կեսը կարելի յե տալ հանձնաժողովներին բաժանորդագրության ժամանակաշրջանի վերջին, այսինքն 1929 թ. դեկտեմբերի 1–ից հետո. վարձատրության մնացած կեսը տրվում է հանձնաժողովներին պարտատոմսերի վերջնական հաշվետեսի ժամանակ: Ոժանդակող հանձնաժողովները ստացած վարձատրությունից կազմում են մի հատուկ ֆոնդ, վորը հատկացվում է այն ծախսերը ծածկելու, վոր արել են ոժանդակող հանձնաժողովները իրենց

մշտական աշխատանքում՝ կոլեկտիվի անդամներին—փոխառության վերցնողներին սպասարկելիս: Այդ փոնդից՝ ըստ հայեցողության հանձնաժողովի, կարող են վարձատրվել կամ պրեմիա ստանալ այն աշխատավորները, վորոնք կոլեկտիվ բաժանորդագրության գործում տեխնիկական աշխատանք են տարել: Աշխատավորների վարձատրությունը կատարվում է արհմիութենական կազմակերպության համաձայնությամբ:

49 Ինչպե՞ս է ձևակերպվում բանվորների և ծառայողների կոլլեկտիվ բաժանորդագրությունը.— Բանվորների և ծառայողների մեջ կոլեկտիվ բաժանորդագրություն կազմակերպելու համար՝ ոժանդակող հանձնաժողովի լիազորը կոլեկտիվի ամեն մի անդամին հարցուփորձի յե յենթարկում: Հարցուփորձի հիմունքով լցվում է հատուկ բաժանորդաթերթ № 11 ձևի: Հարցուփորձի ժամանակ լիազորն ամենից առաջ բացատրում է պարտատոմսերի ընդհանուր անվանական գումարը, վորին ցանկանում է բաժանորդագրվել կոլեկտիվի ամեն մի անդամը: Փոխառությանը բաժանորդագրվելու ցանկություն ունեցող ամեն մեկի ազգանունը գրվում է բաժանորդաթերթի մեջ. ազգանվան դիմացը, 11-րդ սյունյակում մտցվում է կոլեկտիվի անդամի ցույց տված պարտատոմսերի գումարը: Լիազորը պարզաբանում է, թե ինչ գումարի տոկոսաբեր և անտոկոս տեսակի փոխառության է ցանկանում բաժանորդագրվել հարցուփորձի յենթարկվողը: Սրա հետ միաժամանակ բացատրում է թե բաժանորդն ինչ գումարի ամբողջ պարտատոմսերի կամ նրանց կես կամ տասնորդ մասին է ցանկանում բաժանորդագրվել: Այս բոլոր տեղեկությունները մտցվում են բաժանորդաթերթի համապատասխան սյունյակների մեջ: Լիազորի բաժանորդաթերթի մեջը դրված տեղեկությունների ճշտությունը հաստատում է ամեն մի բաժանորդ իր սեփական ստորագրությամբ՝ բաժանորդաթերթի 12-րդ սյունյակում:

50. Լցված բաժանորդաթերթերը հանձնվում են ձեռնարկության կամ հիմնարկի վարչությանը: Բաժանորդաթերթի հիմունքով՝ ձեռնարկության կամ հիմնարկի վարչությունն անմիջապես հայտարարություն է տալիս պարտատոմսերի կոլեկտիվ բաժանորդագրության մասին վարկային հիմնարկին, խնայդրամարկղին կամ գյուղատնտ. վարկային ընկերությանը: Առաջին մուծումը ստանալիս՝ վարկային հիմնարկը, խնայդրամարկղը կամ գյուղատնտ. վարկային ընկերությունը վարչությանն են հանձնում կոլեկտիվի անունով դուրս գրված հաշվեանդորրագիրը № 12 ձևի: Բաժանորդաթերթերը մնում են ի պահ ձեռնարկության կամ հիմնարկի վարչության մոտ:

51. Բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրությանը վերաբերող բոլոր հաշվետվությունը դրվում է ձեռնարկությունների և հիմնարկների վարչության վրա: Ձեռնարկության և հիմնարկի վարչությունը պետք է՝ ա) բաժանորդաթերթերի հիմունքով հայտ ձևակերպի բանվորների և ծառայողների իր կոլեկտիվի համար պարտատոմսեր ձեռք բերելու և ներկայացնի խնայդրամարկղին, գյուղատնտ. վարկային ընկերությանը կամ բանկին. բ) պարտատոմսերի համար բաժանորդների աշխատավարձից պահածները— հավաքված մուծումները հանձնի այն հիմնարկը, վորից պարտատոմսեր են գնել. գ) այդ հիմնարկի ամրացման տալոններ ստանա առաջին մուծումից հետո, իսկ բաժանորդագրությանը վերաբերող վերջնական հաշվեհարը կատարելուց հետո՝ իսկական պարտատոմսերն ստանա. յե) պատշաճ կարգով պահի ստացված տալոններն ու նրանց կից արմատները և պարտատոմսերը. զ) բաժանորդներին ամրացման տալոններ բաժանի, ինչպես և բաժանորդներին հանձնի պարտատոմսերը՝ ամրացման տալոնների փոխանակությամբ, նրանց հետ վերջնական հաշիվը տեսնելուց հետո:



52. Ձեռնարկությունների և հիմնարկների վարչությունը պարտավոր է պարտատոմսերի համար բաժանորդների աշխատավարձից յետ պահած մուծումները հանձնել այն հիմնարկին, վոր ձևակերպել է բաժանորդագրությունը, 3 օրվանից վոչ ուշ բաժանորդների աշխատավարձից պահումներն անելուց հետո:

53. Ձեռնարկություններն ու հիմնարկներն ըստ ամենայնի պատասխանատու յեն ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի առաջ իրենց հանձնված դրամական մուծումների և պարտատոմսերի ամբողջականության և պահպանման համար:

Ձեռնարկություններին և հիմնարկներին պարտատոմսերի համար հանձնված մուծումների ամբողջականության և պահպանման պատասխանատվությունը բաժանորդների առջև կրում է ԽՍՀՄ ՖԺԿ:

54. Վարկային հիմնարկները, խնայդրամարկղները և գյուղատնտ. վարկային ընկերությունները, վորոնք կոլեկտիվ բաժանորդագրության մասին հայտեր են ընդունել, պարտավոր են հետևել, վոր բաժանորդագրության վերաբերյալ վճարումները ժամանակին ստացվեն ձեռնարկություններից և հիմնարկներից:

Կոլեկտիվի ձեռք բերած պարտատոմսերի համար ստացված մուծումները հանձնելու հետ միասին, ներկայացվում է նաև տվյալ կոլեկտիվի անունով տրված հաշվեանդորրագիր, վորի մեջ մուծումներն ընդունող հիմնարկը մուծումի ընդունելության մասին համապատասխան գրառություն է անում:

55. Կոլեկտիվ բաժանորդագրությամբ ձեռք բերված պարտատոմսերի համար առաջին մուծումը տալուց հետո՝ տվյալ կոլեկտիվի բաժանորդագրությանը մասնակցող ամեն մեկը պարտատոմսերի յեկամուտների՝ տոկոսների և շահումների վրա իրավունք է ձեռք բերում, պայմանով՝ վոր բաժանորդից հասանելի վճարումները ժամանակին մուծվեն:

56. Կոլեկտիվներից պարտատոմսերի համար առաջին մուծումն ստանալուց հետո, կոնտրագենտը (այսինքն՝ վարկային հիմնարկը, խնայդրամարկղը կամ գյուղատնտ. վարկային ընկերությունը), վոր կոլեկտիվ բաժանորդագրություն է ընդունել, սահմանված ժամկետներին գավառակային (գավ) գործկոմին է ներկայացնում հաշվետեղեկագիրը № 13 ձևի, այդ տեղեկագրի հակառակ յերեսում տեղեկություններ հաղորդելով մաս-մաս վճարումով վաճառված պարտատոմսերի մասին: Այդ տեղեկությունների մեջ պետք է նշանակվի փոխառության ամեն մի տեսակի (տոկոսաբեր և անտոկոս) ամբողջական և բաժանելի պարտատոմսերի անվանական գումարը:

Տեղեկությունների համաձայն՝ գավառակային (գավ) գործկոմը բանվորների և ծառայողների կոլեկտիվների համար պարտատոմսերի անհրաժեշտ քանակը վորոշում է: Այդ պարտատոմսերի ամրացման տալոններն ու նրանց կից արմատները գավառակային (գավ) գործկոմը հանձնում է հայտ ներկայացնող կոնտրագենտին:

Պարտատոմսերը մնում են գավառակային (գավ) գործկոմում ի պահ, պատշաճ կարգով մինչև կոլեկտիվ բաժանորդագրության վերջնական հաշ-

վճռեսը։ Պահպանելու հարմարության և զանազան սխալներից խուսափելու համար՝ յուրաքանչյուր առանձին կոնտրագենտի վրա հաստատված պարտատոմսերը պետք է դրված լինեն ծրարի մեջ, որի վրա մակագրվում է տվյալ կոնտրագենտի անունը։

Վարկային հիմնարկը, խնադրամարկղը կամ գյուղատնտ. վարկային ընկերությունը գավառակային (գավ) գործկոմից ստացած ամրացման տալոններն արմատների հետ միասին հանձնում են այն ձեռնարկության կամ հիմնարկի վարչությանը, որտեղ պարտատոմսեր գնած կոլեկտիվն է աշխատում։

Վարչությունն ամրացման տալոններն անմիջապես պետք է բաժանի կոլեկտիվ բաժանորդագրության մասնակիցներին։ Տալոնների արմատները վարչության մոտ են պահվում։ Ամրացման տալոնը հանձնելիս՝ թե տալոնի և թե նրա արմատի մեջը պետք է գրվի բաժանորդի ազգանունը, որի վրա յե հաստատվում տալոնում նշանակված պարտատոմսը. ամրացման տալոնների վրա դրվում է հիմնարկի կամ տեղկոմի կնիքը։ Ամրացման տալոններն ստանալու համար՝ բաժանորդագրության ամեն մի մասնակից իր սեփական ստորագրությունն է դնում բաժանորդաթերթի մեջ։

57. Տալոնի նախկին տերը կարող է այն հանձնել նույն կոլեկտիվի մի ուրիշ անդամի, միայն հիմնարկի կամ ձեռնարկության վարչության գիտությամբ։ Հանձնումը կատարվում է մակագրությամբ՝ տալոնի վրա և դիտողությամբ՝ տալոնի արմատի մեջ՝ տեղի ունեցած հանձնման մասին։

Յեթե տալոնը կորչի, բաժանորդը չի կորցնում իր իրավունքը տալոնում նշված պարտատոմսի վրա, որի համար վերականգնվում է տալոնի արմատով, որը պահվում է ձեռնարկության կամ հիմնարկի վարչության
։տոմ

58. Պարտատոմսերի համար կոլեկտիվից վերջին մուծումն ստանալուց հետո՝ վարկային հիմնարկը, խնադրամարկղը կամ վարկային ընկերությունը տվյալ կոլեկտիվի անվանը հաստատված պարտատոմսերն ստանում են գավառակային (գավ) գործկոմից և հանձնում ձեռնարկության կամ հիմնարկի վարչությանը՝ բաժանորդագրության մասնակիցներին բաժանելու համար։ Պարտատոմսերի բաժանումը բաժանորդներին կատարվում է ամրացման տալոնների համաձայն։ Ամեն մի բաժանորդի այն պարտատոմսերն են տրվում, որոնց համարները նշանակված են նրան վաղորոք տրված ամրացման տալոններում։ Իսկական պարտատոմսերի ստացումը ամեն մի բաժանորդ վավերացնում է իր ստորագրությամբ բաժանորդաթերթի 13-րդ սյունակում, միաժամանակ վերադարձնում է իր մոտ յեղած ամրացման տալոնները։ Պարտատոմսերն ստանալիս՝ ամեն մի բաժանորդ իրեն տրված պարտատոմսերի համարները պետք է համեմատի տալոնում նշանակված համարների հետ։ Այն բոլոր դեպքերում, յերբ բաժանորդին տրված պարտատոմսերի համարները չեն համապատասխանում տալոնների մեջ նշանակված համարներին բաժանորդը պետք է հայտնի իսկույն։

59. Բաժանորդագրության պակասեցումը.— Կոլեկտիվ բաժանորդագրության մասնակիցն իրավունք ունի պակասեցնել իր բաժանորդագրության սկզբնական գումարը։ Այդ դեպքում, մուծումների ամբողջ գումարը, որ մտցվել է մինչև բաժանորդագրությունը պակասեցնելու մոմենտը, հաշվվում է այն պարտատոմսերի արժեքը, որ բաժանորդն իր ընտրությամբ վերապահում է իրեն։ Իրեն վերապահված պարտատոմսերի մնացած չվճարված արժեքը բաժանորդը պետք է հավասար մասերով մուծի մինչև մաս-մաս վճարման ժամանակաշրջանի վերջը մնացած ժամանակի ընթացքում։ Որինակ՝ կոլեկտիվ բաժանորդագրության մասնակիցը, որ ոգտվում է 10-ամսյա մաս-մաս վճարումից, 200 ռուբլու յե բաժանորդագրվել։ 5 ամիս անցնելուց հետո՝ նա իջեցնում է իր բաժանորդագրությունը 150 ռուբլու։ Բաժանորդագրությունը պակասեցնելու մոմենտին, նա պարտատոմսերի համար մուծել է 100 ռուբլի։ Ուրեմն, բաժանորդագրությունը պակասեցնելուց հետո, իրեն վերապահած պարտատոմսերի (150 ռուբլու) համար պետք է վճարի ևս 50 ռուբլի, որը նա պետք է մուծի մինչև մաս-մաս վճարման ժամանակի վերջը մնացած 5 ամսվա ընթացքում, հավասար մասերով, այսինքն՝ ամսական 10 ռուբլի։

60. Այն բաժանորդը, որ իր վրա հաստատված պարտատոմսերի արժեքի մի մասը վճարել է, իրավունք ունի բաժանորդագրության հետագա մուծումներից հրաժարվելու։ Այդ դեպքում նրա վրա վաղորոք հաստատված պարտատոմսերից կտրվի այնքան պարտատոմս անվանական գումարով, որքան լրիվ վճարված են նրանից ստացված մուծումներով մինչև մնացած մուծումներից հրաժարվելը։ Այս դեպքում բաժանորդն իր վրա հաստատված պարտատոմսերից որ համարը կամենա կարող է ընտրել։ Նման դեպքում բաժանորդին վերադարձվում է այն դրամական գումարը, կանխիկ, որը չի ծածկում պարտատոմսի $^{1}/_{10}$ մասի գինը (5 ռուբլիանոց պարտատոմսի) յեթե բաժանորդը ցանկանա, նրանից 5 ռուբլիանոց պարտատոմսի արժեքի պակասորդը կպահանջվի և պարտատոմսը կմնա նրան։

Բաժանորդի վրա հաստատված պարտատոմսերը կհանձնվեն նրան միաժամանակ, յեթե ամբողջ կոլեկտիվին կտրվեն պարտատոմսերը, այսինքն՝ 1930 թ. հուլիսի 1-ին։ Այս կանոնից բացառություն թույլ է տրվում միայն այն դեպքում, որը նշված է 62 հոդ. (կ. ա.)։

61. Յերբ բաժանորդները պարտատոմսերի գինը ժամկետառաջ են վճարում.— Կոլեկտիվ բաժանորդագրության ամեն մի մասնակից կարող է ժամկետից առաջ վճարել իր վրա հաստատված պարտատոմսերի ամբողջ արժեքը։ Սակայն ժամկետառաջ վճարված պարտատոմսերը նրան կտրվեն միաժամանակ, յերբ պարտատոմսերը տրվեն ամբողջ կոլեկտիվին, այսինքն՝ 1930 թ. հուլիսի 1-ին։ Այս կանոնից բացառություն թույլ է տրվում միայն այն դեպքում, որ նշված է 62 հոդ. (գ. կ.)։

62. Կոլեկտիվից դուրս յեկող բաժանորդի հաշվետեսը.— Այն դեպքում, յերբ կոլեկտիվ բաժանորդագրության մասնակիցը դուրս է գալիս տվյալ կոլեկտիվից իր մաս-մաս վճարումով ձեռք բերած պարտատոմսերի վերջնական հաշվետեսից առաջ, նրան կարող են առաջարկել պարտատոմսերի հաշիվը տեսնելու հետևյալ ձևերը՝ ա. բաժանորդը կարող է իր վճարած մուծումների գումարով լրիվ վճարված պարտատոմսեր ստանալ և հրաժարվել պարտատոմսերի մնացած գումարից, որին ինքը բաժանորդագրվել է. բ. մեկնող բաժանորդին հնարավորություն է տրվում, իր խնդրանքով, իր բնակության նոր տեղից ուղարկել հերթական մուծումները՝ պարտատոմսերի համար։ Պարտատոմսերի ամբողջ արժեքը վճարելուց հետո, պարտատոմսերը փոստով կուղարկվեն նրան՝ իր հաշվին. գ. բաժանորդը կարող է նաև մեկ անգամից լրացնել պարտատոմսերի ամբողջ արժեքը ծածկող

պակասորդ գումարը և անմիջապես իր ձեռքն առնել վճարված պարտատոմսերը:

63․ Երբ բաժանորդը պարտատոմսերի համար հերթական մուծումները չի վճարում սահմանված ժամկետներին․— Եթե կոլեկտիվ բաժանորդագրության մասնակիցը պարտատոմսերի համար հերթական մուծումը չի վճարում սահմանված ժամկետին (այն դեպքում յերբ հայտարարություն չի արել թե հրաժարվում է բաժանորդագրության վճարումները մուծելուց, ինչպես նըշված է 60 հոդ․) զրկվում է պարտատոմսերի և նրանց յեկամտի՝ տոկոսների և շահումների վրա ունեցած իրավունքից, իսկ բաժանորդից ստացված մուծումները վերադարձվում են նրան կոլեկտիվ բաժանորդագրության վերջնական հաշվետեսից հետո, այսինքն՝ 1930 թ․ հուլիսի 1-ին:

Մուծումները բաժանորդներին վերադարձնում է գավառակային (գավ) գործկոմը մինչև 1930 թվի սեպտեմբերի 30-ը, այդ ժամկետից հետո և մինչև 1932 թ․ սեպտեմբերի 30-ը մուծումները վերադարձնում են միայն Պետբանկի հիմնարկները: Բաժանորդների մուծումների յետպահանջն անում է գավառակային (գավ) գործկոմներից հիմնարկի կամ ձեռնարկության վարչությունը, վորի մեջ բաժանորդն աշխատել է փոխառությանը բաժանորդագրվելու ժամանակ:

1932 թ․ սեպտեմբերի 30-ից հետո բաժանորդը կորցնում է իրավունքը պարտատոմսերի համար մուծած գումարի վրա:

Ծանոթություն․— Կոլեկտիվ բաժանորդագրության հաշվետեսի ժամանակաշրջանում գավառակային (գավ) գործկոմներին իրավունք է վերապահվում թույլ տալ ընդունել կոլեկտիվ բաժանորդագրության մասնակիցների այն մուծումները, վորոնք հետաձգվել են հարգելի պատճառներով:

64․ Կոմիսիոն վարձատրություն գյուղական վայրերում կատարվող իբացման համար․— Կոմիսիոն վարձատրություն տալն ինդուստրացման 3-րդ փոխառության իրացման համար՝ գյուղական վայրերում կատարվում է հետևյալ կարգով՝

ա) Գյուղխորհուրդների կողմից փոխառությունն իրացնելու գործին ներգրավված կոնտրագենտները (անձեր և հիմնարկներ) կոմիսիոն վարձատրություն են ստանում ռուբլուց 1 կոպեկ, վոր գանձել են պարտատոմսերի կանխիկ հաշվով վաճառքից․ այդ վարձատրությունը կոնտրագենտները հանում են դրամների ամեն մի մուծումը գյուղխորհուրդ մտցնելիս: Այն կոնտրագենտները, վորոնք գյուղացիներից մաս-մաս վճարումով բաժանորդագրություն են ընդունում և նրանցից մուծումներ են հավաքում պարտատոմսերի համար, վարձատրություն են ստանում նույնպես 1 կոպեկ ամեն մի ռուբլուց, վոր հանձնում են գյուղխորհրդին: Գյուղխորհուրդն այդ վարձատրությունը տալիս է նրանց իր կոմիսիոն վարձատրությունից, վոր նշված է «բ» կետում:

բ) գյուղխորհուրդը վարձատրություն է ստանում 2 % այն գումարներից, վոր գանձել են կոնտրագենտները պարտատոմսերի կանխիկ հաշվով վաճառքից: Այս կոմիսիոն վարձատրության 1%-ն արդեն կոնտրագենտները վերցնում են իրենց օգտին, ինչպես ասված է վերևում՝ «ա» կետում․ այսպես, ուրեմն գյուղխորհրդի օգտին մնում է 1 %: Այն գումարներից, վոր գանձում է գյուղխորհուրդը՝ թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարու-



մով, իր անձնական վաճառքից, կոմիսիոն վարձատրություն է ստանում նույնպես 2% , վոր մնում է գյուղխորհրդի օգտին:

գ) Այն կոնտրագենտները, վորոնց գավառակային (գավ) գործկոմներն են ներգրավել փոխառությունը իրացնելու գործին (գյուղատնտ․ վարկային ընկերությունները, խնադրամարկղները և վարկային հիմնարկները) կոմիսիոն վարձատրություն են ստանում 1 % այն գումարի, վոր գանձել են նըրանք պարտատոմսերի թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարումով վաճառքից շրջ․ (նահ) գործկոմի սահմանած ժամկետում:

Նույն այդ կոնտրագենտները, վորոնք բանվորների և ծառայողների կոլեկտիվներից բաժանորդագրություն են ընդունում մաս-մաս վճարումով և 10 ամսով, կոմիսիոն վարձատրություն են ստանում ½ % այն գումարի, վոր գանձել են պարտատոմսերի վաճառքից բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրության կարգով:

Ստացվող կոմիսիոն վարձատրության այս ½% հաշվին՝ այդ կոնտրագենտները պարտավոր են տալ հիմնարկներին և ձեռնարկություններին կից ոժանդակող հանձնաժողովներին, վորոնք կոլլեկտիվ բաժանորդագրություն են կազմակերպել— մասնատրում ¼ % այն ընդհանուր գումարի, վոր վճարել է կոլեկտիվը ձեռք բերած պարտատոմսերի համար:

դ) Գավառակային (գավ) գործկոմը ստանում է ½ % այն ամբողջ գումարի, վոր գանձել են գյուղխորհուրդներն ու կոնտրագենտները գավառակային (գավ) գործկոմի հողամասի վրա կատարած պարտատոմսերի թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարումով կատարած վաճառքից այն ժամկետում, վոր սահմանել է շրջ․ (նահ) գործկոմը:

Կոմիսիոն վարձատրության այն գումարից, վոր իրացվել է բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրության կարգով, գավառակային (գավ) գործկոմները չեն ստանում:

յե) Պետբանկի այն հիմնարկները, վորոնք տեղավորված են գյուղական վայրերում, կոմիսիոն վարձատրություն են ստանում ½ % այն գումարի, վոր գանձել են նրանք բանվորների և ծառայողների կոլլեկտիվորեն և գյուղացիներին թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարումով պարտատոմսեր վաճառելուց:

զ) Փոստ-հեռագրական ձեռնարկությունը գավառակային (գավ)գործկոմից վարձատրություն է ստանում 1% այն գումարի, վոր պարտատոմսերի վաճառքից գանձել են թե ինքը՝ փ․ հ․ ձեռնարկությունը և թե նրա մնացած ցանցը:

Փ․ հ․ ցանցի ստանալիք վարձատրությունը բաշխվում է հետևյալ կերպով՝ գյուղնամակատարները, շրջիկները և կործակալությունները (հատիքավոր և անհատիք) պարտատոմսերի վոչ մաս-մաս վճարումով վաճառքի համար ստանում են 1 կոպ․ ամեն մի գանձված ռուբլուց, իսկ պարտատոմսերի մաս-մաս վճարումով վաճառքի մուծումները հավաքելու համար՝ յերեք քառորդ կոպ․ հավաքած ամեն մի ռուբլուց:

Կապի բաժանմունքը կամ հանգույցային (узловые) գործակալությունը, վոր պարտագիր է տվել գավառակային (գավ) գործկոմին, թե մաս-մաս վճարումով և թե վոչ մաս-մաս վճարումով իր վաճառքից գանձ-

ված ամեն մի ռուբլուց 1 կոպեկ է ստանում և, բացի դրանից, ռուբլուն մի ¼ կոպեկ էլ ստանում է այն գումարից, վոր հավաքել են գյուղնամակատարները, շրջիկները և գործակալությունները պարտատոմսերի մաս-մաս վաճառքից:

Կոմիսիոն վարձատրությունը յետ են պահում նամակատարները, շրջիկները և գործակալությունները՝ դրամները կապի կամ հանգուցային գործակալությանը հանձնելիս, իսկ վերջինները դրամները գավառակային (գավ) գործկոմին հանձնելիս:

65. Գավառակային (գավ) գործկոմներին գործառնական և ագիտացիոն նյութեր մատակարարելը.— *Փոխառության իրացման անհրաժեշտ ագիտացիոն և գործառնական նյութերը գավառակային (գավ) գործկոմներն ստանում են շրջանային (գավառային) համապատասխան ֆինբաժիններից:*

Գործառնական նյութերից, վորոնց ձևերը չեն կցվում այս հրահանգին, գավառակային (գավ) գործկոմները կստանան՝

ա) բաժանորդաթերթեր՝ գյուղացիների համար, № 3 ձև.

բ) հաշվանդորրագրեր՝ գյուղացիների համար, № 4 ձև.

գ) բաժանորդաթերթեր՝ բանվորների և ծառայողների կոլեկտիվների համար, № 11 ձև.

դ) հաշվեանդորրագրեր՝ կոլեկտիվների համար, № 12 ձև:

66. 10%-ային մասնատրումը տեղական բյուջեին.—*Ինդուստրացման 3-րդ փոխառության իրացումից փաստորեն գանձված (այսինքն կոմիսիոն վարձատրությունը և փոստի ծախսերը հանելուց հետո) գումարների 10 %-ը մասնատրվում է գավառակային (գավ) գործկոմների բյուջեներին:*

Գավառակային (գավ) գործկոմի յետ պահած 10 %-ային մասնատրումները հանձնվում են խնայդրամարկղին գավառակային (գավ) գործկոմի առանձին ընթացիկ հաշվին, իսկ վորտեղ այդպիսի դրամարկղ չկա՝ մի ուրիշ վարկային հիմնարկի:

Տեղական բյուջեյով 10 %-ային մասնատրումների մուտք ունենալու կարգը, ինչպես և 10 % ային մասնատրումները ծախսելու կարգի մասին ցուցումները կհաղորդվեն գավառակային (գավ) գործկոմներին լրացուցիչ կերպով:

67. Պարտատոմսերի և դրանց վաճառքից ստացված գումարների հաշվառքը.— *Պարտատոմսերի հաշվառքի և փոխառության հաշիվների համար գավառակային (գավ) գործկոմն իր մոտ գործադրում է՝ 1. պարտատոմսերի մուտքի և ելքի տեղեկագիր № 5 ձևի, վոր սահմանված է գյուղխորհուրդների և իրենց կոնտրագենտների անձնական հաշիվները հետևյալ № 14 ձևի (ամեն մի գյուղխորհրդի և ամեն մի կոնտրագենտի համար, վորոնց գավառակային (գավ) գործկոմն է ներգրավել, առանձին անձնական հաշիվ է տարվում):*



**Կոնտրագենտի (յենթագրեիչ խնայդրամարկղի) անձնական հաշիվը**

Ձև № 14

| Ամիս և ամսաթիվ | Պարտատոմսեր են տրված անվանական ցուցակով | Պարտատոմսերն են վաճառված անվան. գնով: Կանխիկ հաշվով | Պարտատոմսերն են վաճառված անվան. գնով: Մաս-մաս վճարումով | Ստացված է պարտատոմսերից: Կանխիկ հաշվով վաճառքից ռ. | կ. | Ստացված է պարտատոմսերից: Մաս-մաս վաճառումով վաճառքից ռ. | կ. | Հանված է: Կոմիսիոն վարձատրություն ռ. | կ. | Հանված է: Փոստի ծախսեր ռ. | կ. | Գավառակային գանձարկղն է մտել ռ. | կ. | Վերադարձվել է պարտատոմսեր անվանական գումարով | Գավառային և Շրջգործկոմի գանձարկղին հանձնվել է տույժ հետաձգման համար | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | | 7 | | 8 | | 9 | | 10 | 11 | 12 |
| 1 | 1175 | 100 | 1000 | 98 | 50 | 1000 | — | 9 | 73 | — | — | 1088 | 77 | 75 | 1—08 | Հաշվեանդորրագրեր տրված է — 50. Վերադ. չօգտ.— 10. Վերադարձ. փոխանակված անդորրագ.— 38. |

Վերևում բերված օրինակում անձնական հաշվին վերաբերող յեզրափակման գումարներն են տրված: Ընդամենը կոնտրագենտը պարտատոմսեր է վաճառել (1·175—75 ռ.) = 1·100 ռ. անվանական գումարի: Նրանցից՝ կանխիկ հաշվով 100 ռ. և մաս-մաս վճարումով՝ 1000 ռ. (այդ թվում մաս-մաս վճարումով գյուղացիներին 750 ռ. և մաս-մաս վճարումով բանվորներին և ծառայողներին 250 ռ.):

ա) կանխիկ հաշվով վաճառված պարտատոմսերից կոնտրագենտը գանձել է 98 ռ. 50 կ. (անվանական գումարի 50 ռուբ. պարտատոմսեր 49 ռ. 10 կ. գնով և անվան. գում. 50 ռ. պարտատոմսեր՝ 49 ռ. 40 կ. գնով):

բ) մաս-մաս վճարումով վաճառված պարտատոմսերից (750 ռ., 250 ռ.) գանձված է = 1·000 ռ.: Ընդամենը կոնտրագենտն ստացել է 1·098 ռ. 50 կ.: Այդ գումարից կոնտրագենտը հանել է կոմիսիոն վարձատրություն և 1 % կանխիկ հաշվով վաճառքից = 98 կ. (98 ռ. 50 կոպեկից), 1 % գյուղացիների մաս-մաս վճարումով վաճառքից=7 ռ. 50 կ. (750 ռ.) և ½% բանվորների և ծառայողների կոլեկտիվին մաս-մաս վճարումով վաճառքից = 1 ռ. 25 կ. (250 ռ.). ընդամենը կոմիսիոն վարձատրություն է հանված = 9 ռ. 73 կ.: Գավառակային(գավ) գործկոմի դրամարկղին դրամ է հանձնված 1·088 ռ. 77 կ.:

Կոնտրագենտների անձնական հաշվի յեզրափակումից հետո, այն գումարը, վոր նրանից ստացվել է (9-րդ սյունյակով) ավելացրած նրա պահումները (7-րդ և 8-րդ սյունյակներով), ավելացրած վերադարձրած պարտատոմսերի անվանական արժեքը (10-րդ սյունյակով) հավասար է տրված

պարտատոմսերի անվանական արժեքին (2-րդ սյունյակ), հանելով այն գումարը, որ կանխիկ հաշվով վաճառված պարտատոմսերի զեղչն է կազմում, մեր օրինակում 1 ռ. 50 կ. (անվանակ. 50 ռուբ., որ վաճառվել են 49 ռ. 10 կ. զեղչն անում է=90 կոպ. և 50 ռ. անվանականից, որ վաճառվել են 49 ռ. 40 կ., զեղչն անում է=60 կ.): 1·088 ռ. 77 կ.— 9 ռ. 73 կ.— 75 ռ. = 1175 ռ. — 1 ռ. 50 կ.:

Ցենթադրենք, որ բաժանորդները պարտատոմսերի գինը լրիվ չեն վճարել և այդ պարտատոմսերի մուծումները, դիցուք 10 ռ., նրանք դեռ չեն տայել: Բացի դրանից, մի քանի գնորդ ժամկետին չեն ստացել լրիվ վճարված պարտատոմսերը, դիցուք՝ 15 ռ.: Այդ դեպքում կոնտրագենտը պետք է 25 ռուբլու դրամ և պարտատոմս ավելի տա, քան ցույց է տրված մեր օրինակում: 11-րդ սյունյակով գավառակային (գավ) գործկոմը հաշվի չի առնում կոնտրագենտից ստացված տույժը դրամների և պարտատոմսերի ուշացման համար: «Ծանոթություն» սյունյակում պետք է նշել հաշվեանդորրագրերի քանակը, տրվածների և վերադարձրածների: Այսպես, եթե կոնտրագենտին տրված է ընդամենը 50 հատ հաշվեանդորրագիր, գավառակային (գավ) գործկոմը ստուգելով, որ 48 հաշվեանդորրագիր վերադարձված են, արմատներով պարզում է չներկայացրած անդորրագրերի դրամի գումարը, որ գնորդները մտցրել են և ստուգում է թե այդ գումարը կոնտրագենտը հանձնե՞լ է, թե՞ ոչ:

68. Գավառակայիճ (գավ) գործկոմի կոնտրագենտների հաշվետվությունը.— Գավառակային (գավ) գործկոմը կոնտրագենտներին (խնայդրամարկղներ, գյուղատնտ. վարկային ընկերություններ և այլն) մատակարարում է պարտատոմսեր: Կոնտրագենտները հանձնում կամ ուղարկում են գավառակային (գավ) գործկոմին պարտատոմսերի վաճառքից գոյացած դրամները, հանելով բաժանորդներին վերադարձրած գումարները՝ դուրս չեկած վաճառքի հետևանքով, հետևյալ ժամկետներով՝ 1929 թ. սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ ժամանակամիջոցում ամեն մի 10 օրը մի անգամ—ամեն ամսի 12, 22 և 2, սկսելով 1929 թ. սեպտեմբերի 12-ից և վերջացնելով 1929 թ. դեկտեմբերի 2-ին: 1929 թ. դեկտեմբերի 2-ի հաշվետեղեկագրով կոնտրագենտները գավառակային (գավ) գործկոմին են հանձնում կանխիկ հաշվով վաճառելիք պարտատոմսերի մնացորդը: Հետագայում կոնտրագենտները հանձնում են կամ ուղարկում դրամները ամիսը 2 անգամ, ամեն ամսի 2-ին և 17-ին, սկսելով 1929 թ. դեկտեմբերի 17-ից: 1930 թ. հունիսի 2-րդ կիսի համար, պարտատոմսերի վերջնական հաշվետեսի ժամանակ, կոնտրագենտները դրամը մտցնում են շրջ. (նահ.) գործկոմ 1930 թ. հուլիսի 10-ին:

Գյուղացիների հաշիվների վերաբերմամբ գավառակային (գավ) գործկոմի կոնտրագենտները գործադրում են № 7 ձևի հաշվետեղեկագիրը Այն կոնտրագենտները, վորոնք մաս-մաս վճարումով պարտատոմսեր են վաճառում բանվորների և ծառայողների կոլեկտիվներին, այդ կոլեկտիվների հետ հաշիվ են տեսնում նույն այդ № 7 ձևով: Բանվորների և ծառայողների կոլեկտիվների հետ հաշիվ տեսնելու համար ֆինօրգանները տեղեկագրերի բլանկներ չեն ուղարկի և կոնտրագենտները այդ հաշիվները տանում են մի առանձին թերթով, վորի վրա № 7 ձևի համաձայն աղյուսակ պետք է կազմեն,



բայց ավելացնելով սյունակներ մայիս և հունիս ամիսների համար (ամեն ամսի համար յերկուական սյունյակ):

Գավառակային (գավ) գործկոմին դրամները հանձնելիս՝ կոնտրագենտները ներկայացնում են հաշվետեղեկագիր, հետևյալ № 13 ձևի:

## ՀԱՇՎԵՏԵՂԵԿԱԳԻՐ

Ժողովրդական տնտեսության ինդուստրացման պետ. 3-րդ ներքին շահող փոխառության պարտատոմսերի վաճառքի, 1929 թ. նոյեմբերի 1-ից առ 10 նոյեմբերի ժամանակում:

Կոնտրակենտի անունը . . . . . . . .

| ՍՏԱՑՎԵԼ Է | | | | | | | | | ՀԱՆՎԵԼ Է | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կանխիկ հաշվով վճարված 4 ռ. 94 կոպ. գնով 5 ռ. պարտատոմսեր | | Մաս-մաս վճար. մուծումներ | | | | Ընդամենը ստացվել է | | Կոմիսիոն վարձատրություն | | | | Փոստային ծախսեր | | Դրամ հանձնված և գավառակային գործկոմին (սյուն. 4 հանած սյուն. 5, 6 և 7) | |
| | | Գյուղատնտ. ընկերություններից | | Բանվոր. և ծառ. կոլեկտիվ. կոմիտեներից | | | | 1% սյուն. 1 և 2 գումարից | | ½ % սյուն. 3 գումարից | | | | | |
| Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| 1 | | 2 | | 3 | | 4 | | 5 | | 6 | | 8 | | 8 | |
| 163 | 02 | 250 | — | 100 | — | 513 | 02 | 4 | 13 | — | 50 | — | — | 508 | 39 |

Սրանով ներկայացնում եմ դրամ հինգ հարյուր ութ ռուբլի 39 կ. գումարի. անվաճառ պարտատոմսեր են մնում անվանական գ. 125 ռ. գումարի:

1929 թ. նոյեմբերի 12.

(Ստորագրություն)
Կոնտրագենտի հասցեն՝

Կոնտրագենտից դրամների ստացման համար գավառակային (գավգործկոմը տալիս է նրան սահմանված կարգի անդորրագիրը:

Ձև № 13 հաշվետեղեկագրի հակառակ կողմում կոնտրագենտը բաժանորդագրության ժամանակամիջոցում, այսինքն՝ 1—9 առ 30—11-29 թ., տեղեկություններ են տալիս հաշվետու ժամանակաշրջանում վաճառված պարտատոմսերի անվանական գումարի մասին հետևյալ ձևով՝

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժողովրդական տնտեսության ինդուստրացման Պետ. 3-րդ ներքին շահող փոխառության պարտատոմսերի վաճառքի մասին (անվանականով) 1929 թ. նոյեմբերի 1-ից առ 10 նոյեմբերի ներառյալ:

| Վաճառված է հաշվետու ժամանակաշրջանում | | | | | | | Գնորդների քանակը հաշվետու ժամանակաշրջանում | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տոկոսաբեր տեսակի | | | Անտոկոս տեսակի | | | Ընդամենը անվանական գումարով | | | |
| Կանխիկ հաշվով | Մաս-մաս վճարումով | | Կանխիկ հաշվով | Մաս-մաս վճարումով | | | Կանխիկ հաշվով | Մաս-մաս վճարումով | |
| | Գյուղացիներին | Բանվոր. և ծառայող. կոլլեկտիվ. | | Գյուղացիներին | Բանվոր. և ծառայող. կոլլեկտիվ. | | | Գյուղացիներին | Բանվոր. և ծառայողներին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 65 | 75 | 30 | 100 | 175 | 70 | 515 | 5 | 10 | 3 |

Վաճառված պարտատոմսերի անվանական գումարը (գումար 7-րդ սյունյակի) բաշխվում է ըստ արժեքների, հետևյալ կերպով՝

| Տոկոսաբեր տեսակի՝ գումարով | | | Անտոկոս տեսակի՝ գումարով | | |
|---|---|---|---|---|---|
| Ամբողջ պարտատ. (50 ռուբ. արժեքով) | 2 մասի բաժան. պարտատ. (25 ռուբ. արժեքով) | 10 մասի բաժան. պարտատ. (5 ռուբ. արժեքով) | Ամբողջ պարտատ. (50 ռուբ. արժեքով) | 2 մասի բաժան. պարտատ. (25 ռուբ. արժեքով) | 10 մասի բաժան. պարտատ. (5 ռուբ. արժեքով) |
| 50 | 20 | 100 | 100 | 45 | 200 |

Յեթե հաշվետու ժամանակաշրջանում բաժանորդագրության պակասեցում է տեղի ունեցել, այդ մասին կոնտրագենտը տեղեկացնում է՝ փոխառության տոկոսաբեր տեսակի համար սյուն. սյուն. 2—3 և փոխառության անտոկոս տեսակի համար սյուն. սյուն. 5–6: Այդ նույն սյունյակներում գրվում են այն պարտատոմսերի համարները, վորոնք դուրս են ընկնում բաժանորդագրությունից, նրա պակասեցման հետևանքով: Միաժամանակ, կոնտրագենտը գավառակային (գավ) գործկոմին է վերադարձնում այդ պարտատոմսերի ամրացման տալոններն ու տալոնների արմատները:

Գյուղխորհուրդների հաշվետվության կարգը, իրենց վաճառած պարտատոմսերից գանձված դրամները հանձնելու կարգն ու ժամկետը ցույց են տրված ԽՍՀՄ ԺՖԿ 1929 թ. հուլիսի 4–ի հրահանգում՝ ինդուստրացման 3–րդ փոխառության պարտատոմսերի վաճառքի պայմանների մասին՝ գյուղխորհուրդների միջոցով:

Կոնտրագենտների և գյուղխորհուրդների՝ գավառակային (գավ) գործկոմների կողմից ստացված հաշվետեղեկագրերը, հաշիվների համարության համար, ջոկջկվում և պահվում են առանձին, ըստ ամեն մի գյուղխորհրդի և կոնտրագենտի:



69. 1930 թ. հուլիսի 10–ին գավառակային (գավ) գործկոմի կոնտրագենտները վերջացնում են բաժանորդագրությանը վերաբերող հաշիվները: Այդ ժամկետից հետո—մինչև 1930 թ. հուլիսի 31–ը ներառյալ—կոնտրագենտները միայն հաշվետեղեկագրերի և ամրացման տալոնների փոխանակություն են կատարում լրիվ վճարված պարտատոմսերի հետ: 1930 թ. օգոստոսի 1–ից գավառակային (գավ) գործկոմը բաժանորդներին է հանձնում լրիվ վճարված պարտատոմսերը:

Դուրս չեկած վաճառքի հետևանքով բաժանորդներին հասանելի գումարների վերադարձը կոնտրագենտները կատարում են մինչև 1930 թ. հունիսի 30–ը ներառյալ, բաժանորդագրությունից ստացած մուծումներից:

Հետագայում, դուրս չեկած վաճառքի հետևանքով բաժանորդներին հասանելի դրամների վերադարձումը կատարում է գավառակային (գավ) գործկոմը, վորին կոնտրագենտը 1930 թ. հուլիսի 10–ին հանձնում է այդ վաճառքներին վերաբերող հաշվետեղեկագրերի արմատները: Ամրացման տալոններն ու նրանց արմատները, պարտատոմսերի հետ փոխանակված հաշվետեղեկագրերը և այդ անդորրագրերի արմատները, ինչպես և հաշվետեղեկագրերի չօգտագործված և փչացած բլանկները կոնտրագենտները վերադարձնում են 1930 թ. սեպտեմբերի 30–ից հետո: Չպահանջված հաշվետեղեկագրերի և ամրացման տալոնների արմատները կոնտրագենտը 1930 թ. օգոստոսի 1–ին հանձնում է (ուղարկում) գավառակային (գավ) գործկոմին, չհանձնված պարտատոմսերի մնացորդի հետ միասին:

70. Գավառակային (գավ) գործկոմի հաշվետվությունը.—Փոխառության իրացումից գանձված գումարները գյուղխորհուրդներից և կոնտրագենտներից ստանալով՝ գավառակային (գավ) գործկոմները մտցնում են գանձարկղի մատյան «այլ գումարներ» սյունյակով և «բացի այդ գանձվող գումարների» մատյանում, առանձին սյունյակով:

Փոխառությունից ստացված ամբողջ հասույթը, հանած սահմանված կոմիսիոն վարձատրությունը, փոստային ծախսերը, տեղական բյուջեներին հատկացված 10 % մասնատրումները, գավառակային (գավ) գործկոմը հանձնում (ուղարկում է) Պետբանկի հիմնարկը (միասին այն ֆինբաժնի հետ), վորին փոխառության իրացման վերաբերությամբ հաշվետու է գավառակային (գավ) գործկոմը, ամփոփման հաշվետեղեկագրերի հետ միասին հետևյալ № 15 ձևով:

ՖԻՆԲԱԺԻՆ.

Իվանովսկու Շրջգործկոմի ամփոփիչ հաշվետեղեկագրերը, վոր վերաբերում է ժողովրդական տնտեսության ինդուստրացման պետական 3–րդ ներքին շահող փոխառության պարտատոմսերի վաճառքին:

1929 թ. նոյեմբերի 1–ից առ 10 նոյեմբերի ներառյալ ժամանակի ընթացքում

| Գանձված է գյուղխորհուրդների, նրանց կոնտրագենտ. և շրջգավգործկոմների կոնտրագենտ. միջոցով | 1. Կանխիկ հաշվով վաճառքից | 2. Մուծումներ մաս-մաս վճարումով: Գյուղացիներին վաճառվածից | 3. Մուծումներ մաս-մաս վճարումով: Բանվորների, և ծառայողների կոլեկտիվ վաճառվածից | 4. Ընդամենը գանձված է | 5. Կոմիսիոն վարձատրություն: Գյուղխորհուրդների և կոնտրագենտների կողմից (Շրջ. և գավ.) | 6. Կոմիսիոն վարձատրություն: Շրջգավգործ. ½ % 1 և 2 սյունյակների գումարից | 7. Հ Ա Ն Վ Ա Ծ Է: Փոստ. ծախսեր գյուղխորհ. շրջգավգործկոմ. և նրանց կոնտրագենտների կողմից | 8. Հ Ա Ն Վ Ա Ծ Է: Պետք է հանձնել հանելով կոմիսսիոն վարձատրութ. և փոստ. ծախսերը (սյուն. 4 հանած սյուն. 5, 6 և 7) | 9. Հ Ա Ն Վ Ա Ծ Է: 10% մասնատրում տեղական բյուջեյին սյունյակ 8 գումարից | 10. Հ Ա Ն Վ Ա Ծ Է: Տրված է Պետբանկի հիմնարկին | 11. Բացի դրանից տույժ է գանձված կոնտրագենտներից հետաձգման պատճառով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. | Ռ. Կ. |
| Գյուղխորհուրդներ | 113—62 | 95—84 | — — | 209—46 | 4—19 | — — | — 50 | — — | — — | — — | — — |
| Կոնտրագենտներ | 163—02 | 250 — | 100 — | 513—02 | 4—63 | — — | — — | — — | — — | — — | — — |
| | 276—64 | 345—84 | 100 — | 722—48 | 8—82 | 3—11 | — 50 | 710—05 | 71 — | 639—05 | — 95 |



*Սրանով ներկայացնում եմ վեց հարյուր քառասուն ռուբլի գումարի գրած։*

*Անվճառ պարտատոմսեր են մնացել 450 ռ. անվանական գումարի, 29 թ. նոյեմբերի 15։ (Ստորագրություն)*

Որինակում գյուղխորհուրդների և կոնտրագենտների գանձածն առանձին է ցույց տրված հաշվի պարզության համար. Հաշվետեղեկագիրը ֆինբաժնին ներկայացնելիս՝ գավառակային (գավ)գործկոմը միայն ընդհանուր գումարներն է դնում։

1, 2, 3 և 4 սյունյակներում գավառակային (գավ)գործկոմը նշում է գյուղխորհուրդների և կոնտրագենտների գանձած գումարները լրիվ, այսինքն առանց հանելու նրանց յետ պահած կոմիսսոն վարձատրությունները ու փոստային ծախսերը։ Իրեն հասանելի կոմիսիոն վարձատրությունը (½ %) այն գումարներից, որ գանձված են թե կանխիկ հաշվով և թե մաս-մաս վճարումով գյուղացիներին վաճառած պարտատոմսերից, գավառակային (գավ)գործկոմը յետ է պահում գանձվածի լրիվ գումարից 1 և 2 սյունյակով։ Այն գումարներից, որ ստացվել են բանվորների և ծառայողների կոլեկտիվներին մաս-մաս վճարումով պարտատոմսեր վաճառելուց (սյուն. 3), գավառակային (գավ)գործկոմը կոմիսիոն վարձատրություն չի ստանում։ Տաս տոկոսային մասնատրումը տեղական բյուջեյին գավառակային (գավ)գործկոմը վերցնում է գանձված զուտ գումարից (սյուն. 8), որ պետք է հանձնվի Պետբանկի հիմնարկին։

71. Իրացման ժամանակաշրջանում գավառակային (գավ)գործկոմը պարտատոմսերի հաշիվը փակում է յուրաքանչյուր 10 օրը մի անգամ, հետևյալ ժամկետներում՝ 16/9, 25/9, 5/10, 15/10, 25/10, 5/11, 15/11, 25/11 և 5/12—1929 թ. միաժամանակ լցնելով տեղեկության հակառակ կազմում հաշվետու ժամանակաշրջանում վաճառված պարտատոմսերի անվանական գումարի մասին՝ հետևյալ ձևով։

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ժողովրդական տնտեսության ինդուստրացման պետական ներքին 3-րդ շահող փոխառության պարտատոմսերի վաճառքի մասին 1929 թ. նոյեմբերի 1-ից առ 10 նոյեմբերի ժամանակի ընթացքում, անվանականով.*

| Հաշվետու ժամանակաշրջանում վաճառված է անվանականով: Տոկոսաբեր տոմսեր: Կանխիկ հաշվով | Տոկոսաբեր տոմսեր: Մաս-մաս վճարումով: Գյուղացիներին | Տոկոսաբեր տոմսեր: Մաս-մաս վճարումով: Բանվոր. և ծառայող. կոլեկտիվ. | Անտոկոս տոմսեր: Կանխիկ հաշվով | Անտոկոս տոմսեր: Մաս-մաս վճարումով: Գյուղացիներին | Անտոկոս տոմսեր: Մաս-մաս վճարումով: Բանվոր. և ծառայող. կոլեկտիվ. | Ընդամենը անվանական գումարով | Գնորդների քանակը հաշվետու ժամանակաշրջանում: Կանխիկ հաշվով | Գնորդների քանակը: Մաս-մաս վճարումով: Գյուղացիներ | Գնորդների քանակը: Մաս-մաս վճարումով: Բանվոր. և ծառայողներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 105 | 275 | 30 | 175 | 550 | 70 | 1205 | 9 | 27 | 3 |

Վաճառված պարտատոմսերի անվանական գումարը (գումար 7-րդ սյունյակի) ըստ արժեքի բաշխվում է հետևյալ կերպով՝

| Տոկոսաբեր տեսակի, գումարով | | | Անտոկոս տեսակի, գումարով | | |
|---|---|---|---|---|---|
| Ամբողջ պարտատ. (50 ռուբ. արժեքով) | 2 մասի բաժան. պարտատ. (25 ռուբ. արժեքով) | 10 մասի բաժան. պարտատ. (5 ռուբ. արժեքով) | Ամբողջ պարտատ. (50 ռուբ. արժեքով) | 2 մասի բաժան. պարտատ. (25 ռուբ. արժեքով) | 10 մասի բաժան. պարտատ. (5 ռուբ. արժեքով) |
| 50 | 20 | 340 | 100 | 45 | 650 |

Բաժանորդագրությունը պակասելու դեպքում գավառակային (գավ) գործկոմն փոխառության տոկոսաբեր տեսակի համար հաղորդում է 2 և 3 սյունյակներում, իսկ անտոկոս տեսակի համար՝ 5 և 6 սյունյակներում, նշելով «բաժանորդագրությունը պակասեցվել է»: Այդ պարտատոմսերը, ամ- բացման տալոններով և արմատներով միասին, միաժամանակ և հաշվետեղեկագրերը գավառակային (գավ)գործկոմը հանձնում է Պետբանկի հիմնարկին:

Կոնտրագենտների վաճառած պարտատոմսերի անվանական գումարը գավառակային (գավ)գործկոմը բաժանում է ըստ գների (50 ռ., 25 ռ. և 5 ռուբ.) կոնտրագենտների կողմից ներկայացրած նույն տեղեկությունների ձևով. գյուղխորհուրդների և նրանց կոնտրագենտների ամբողջ վաճառքը 10 մասի բաժանվող 5 ռուբ. արժ.) պարտատոմսերի հաշվի մեջ է առնվում:

1929 թ. դեկտեմբեր. 5 հաշվետեղեկագրով գավառակային (գավ)գործկոմը Պետբանկի հիմնարկին է հանձնում (ուղարկում) այն պարտատոմսերը, որ չեն իրացվել կանխիկ հաշվով, չեթե այդ պարտատոմսերը մաս-մաս վճարող բաժանորդների վրա հատկացնելու կարիքը չի լինի:

Մաս-մաս վճարումով վաճառքի մուծումները (1929 թ. նոյեմբերի 30-ից հետո) գավառակային (գավ)գործկոմները կատարում են ամիսը 2 անգամ, ամեն ամիս 5-ին և 22-ին, սկսելով 1929 թ. 22/12: 1930 թ. հունիս ամսի 2-րդ կեսի հաշիվը գավառակային (գավ)գործկոմը տեսնում է 1930 թ. հուլիսի 15-ին:

Պարտատոմսերը, հաշվետեղեկագրերը և դրամներն ուղարկելու փոստային ծախսերը գավառակային (գավ)գործկոմը հանում է այն գումարներից, որ պետք է Պետբանկի հիմնարկին հանձնվեն: Գավառակային (գավ)գործկոմի և նրա կոնտրագենտների կատարած փոստային ծախսերի արդարացուցիչ փաստաթղթերը պահվում են գավառակային (գավ)գործկոմի գործերում և ֆինբաժին չեն ուղարկվում:

15 ձևի հաշվետեղեկագիրը 3 օրինակով է արտատպվում: Հաշվետեղեկագրի մեկ օրինակը հանձնվում է փոստի հիմնարկին, որը դրամների հետ միասին ուղարկվում է այն Պետբանկի հիմնարկը. երկրորդ օրինակը թողնվում է գավառակային (գավ) գործկոմի գործերում, իսկ երրորդը՝ գավառակային (գավ)գործկոմը, դրամավոր ծրարից առանձին, ուղղում է Պետբանկի հիմնարկին միաքաղաքային ֆինօրգանին հանձնելու համար, նշելով հաշվետեղեկագրի վրա, թե դրամները ստացվել են:

Դրամներն ուղարկելիս՝ գավառակային (գավ)գործկոմի դրամարկղի մատյանում և «զանազան գումարների» մատյանում ծախսերը նշանակվում են



և դրամարկղի մատյանում նշվում է փոստային հիմնարկի փոստային անդորրագիրը:

Պետբանկի այն հիմնարկների հետ հաշիվ տեսնելը, որոնք ֆինօրգանների հետ միաքաղաքային չեն, կատարվում է ինդուստրացման 2-րդ փոխառության ժամանակը գործադրվող կարգով, այսինքն՝ Պետբանկի հիմնարկները, որոնք ֆինօրգանների հետ միաքաղաքային չեն, փոխառությանը վերաբերող հաշիվները վարում են գավառակային (գավ)գործկոմների հետ, սահմանված ժամկետներում, տալով նրանց հաշվետեղեկագրեր և տեղեկություններ, որոնք նախատեսված են հրահանգով: Սակայն, պարտատոմսերի վաճառքից գանձված դրամները Պետբանկի հիմնարկները չեն հանձնում գավառակային (գավ)գործկոմին, այլ առնում են «միջգրասենյակային պահանջի հաշվի» մեջ Պետբանկի այն հիմնարկի հաշվին, որը միաքաղաքային է այն ֆինօրգանի հետ, որի հետ գավառակային (գավ)գործկոմը փոխառությանը վերաբերող հաշիվներ է տանում: Գավառակային (գավ)գործկոմը Պետբանկի հաշվետեղեկությունները մտցնում է իր ամփոփիչ հաշվետեղեկագրի մեջ և հանձնում այն Պետբանկի հիմնարկին, գյուղխորհուրդներից և կոնտրագենտներից ստացված դրամների հետ միասին: Միաժամանակ գավառակային (գավ)գործկոմը հանում է կոմիսիոն վարձատրությունը և 10% մասնահանումները նույնպես և այն գումարներից, որ գանձել է Պետբանկի հիմնարկը: Ամփոփիչ հաշվետեղեկագրերի մեջ գավառակային (գավ) գործկոմը նշում է անում այն փաստաթղթի վրա, որ հաստատում է, թե Պետբանկը պարտատոմսերի հաշիվը տեսել է:

72. Փոխառության վաճառքի հաշվառման համար՝ ըստ անվանականի, գավառակային (գավ)գործկոմն օժանդակ տեղեկագիր է պահում (16 ձևի), որը միացնում է գյուղխորհուրդների և կոնտրագենտների տվյալները և հիմք է դառնում վաճառված պարտատոմսերի անվանական գումարի մասին տեղեկություններ լցնելու:

Այդ օժանդակ տեղեկագիրը գավառակային (գավ)գործկոմը հետևյալ № 16-ի ձևով է տանում:

| Գյուղխորհուրդների և կոնտրագենտների անվանումը | Վաճառված է տոկոսաբեր տեսակի | | | Վաճառված է անտոկոս տեսակի | | | Ընդամենը՝ անվանական | Գնորդների քանակը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մաս-մաս վճարումով | | | Մաս-մաս վճարումով | | | | Մաս-մաս վճարումով | |
| | Կանխիկ հաշվով | Գյուղացիներին | Բանվոր. և ծառայող. խավին | Կանխիկ հաշվով | Գյուղացիներին | Բանվոր. և ծառայող. խավին | | Կանխիկ հաշվով | Գյուղացիներից | Բանվորներից և ծառայողներից |
| Վասիլևսկի գյուղխորհուրդ. | 40 | 200 | — | 75 | 375 | — | 690 | 4 | 17 | — |
| Խնայդրամարկղ | 65 | 75 | 30 | 100 | 175 | 70 | 515 | 5 | 10 | 3 |
| Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանում | 105 | 275 | 30 | 175 | 550 | 70 | 1205 | 9 | 27 | 3 |

Ամեն մի հաշվետու ժամանակաշրջանի վերջանալուց հետո գավառակային (գավ)գործկոմը բոլոր սյունյակների գումարներն ամփոփում է և փոխանցում է անում № 15 ձևի ամփոփիչ հաշվետեղեկագրի հակառակ կողմում: № 16 օժանդակ տեղեկագրի բլանկներ ֆինորգանները գավառակային (գավ)գործկոմներին չեն ուղարկի և յուրաքանչյուր գավառակային (գավ) գործկոմ այդ տեղեկագիրը մի առանձին թերթ թղթի վրա, տանում է աղյուսակ կազմելով վերևում նշված ձևով:

1930 թ. հուլիսի 10-ին գավառակային (գավ)գործկոմները փոխառության վաճառքին վերաբերող իրենց բոլոր հաշիվները, իրենց կոնտրագենտների հետ վերջացնում են։

Հուլիս ամսին կոնտրագենտները միայն հաշվեանդորրագրերի և լրիվ վճարված պարտատոմսերի փոխանակություն են կատարում: Օգոստոսի 1-ից հաշվեանդորագրերի ու ամրացման տալոնների փոխանակությունը լրիվ վճարված պարտատոմսերի հետ կատարում են գավառակային (գավ)գործկոմները (մինչև 1930 թ. 30/9): Բաժանորդագրության հաշվետուի ժամանակաշրջանում (1929 թ. 1/9-ից առ 1930 թ. 30/6 ներառյալ) գավառակային (գավ)գործկոմները վերադարձնում են բաժանորդներին հասանելի այն գումարները, վոր գանձվել է փոխանակությունից, գյուղխորհուրդներում գլուխ չեկած վաճառքի հետևանքով: 1930 թ. հուլիսին, օգոստոսին և սեպտեմբերին գավառակային (գավ)գործկոմները վերադարձնում են այդ գումարները, վոր գանձվել են կոնտրագենտների գծով—պետբյուջեյի ընդհանուր մուտքերից:

1930 թ. հուլիսի 1-ից հաշվեանդորրագրերը, վորոնցով վերադարձվել են մուծումները (նշելով տրված գումարը), գավառակային (գավ)գործկոմն ուղարկում է պետբանկի հիմնարկը, իսկ վերջինս ներկայացնում է նրանց ֆինորգան հաշիվներում անցկացնելու (деб. сч. госдоходов, поступлений по 3-му индустриализации, кредита сч. госдохода по соответствующему §-у и ст.).

1930 թ. 30/9 հետո անպահանջ մնացած պարտատոմսերը գավառակային (գավ)գործկոմները հանձնում են պետբանկի հիմնարկներին—(հաշվեանդորրագրերի և ամրացման տալոնների կտրոնների հետ միասին)—անցողիկ արժեքների հաշվին գրելու: Գավառակային (գավ)գործկոմը միաժամանակ պետբանկի հիմնարկին է հանձնում բաժանորդագրությամբ գլուխ չեկած հաշվեանդորրագրերի արմատները, վորոնց վերաբերող մուծումները դեռ չեն վերադարձվել բաժանորդներին:

Բաժանորդներին օգոստոսին և սեպտեմբերին տրված պարտատոմսերի հաշվեանդորրագրերը, ամրացման տալոններն ու նրանց կից արմատները պահվում են գավառակային (գավ)գործկոմում մինչև 1930 թ. 30/9 ներառյալ և այդ ժամկետից հետո վոչնչացվելու յեն ենթակա:

1930 թ. հոկտեմբերի 1-ից հաշվեանդորրագրերի փոխանակությունը լրիվ վճարված պարտատոմսերի հետ, ինչպես և բաժանորդագրությամբ գլուխ չեկած մուծումների վերադարձն իրագործում են միայն Պետբանկի հիմնարկները—մինչև 1932 թ. 30/9: Բաժանորդները պարտատոմսերի և մուծումների պահանջը կարող են անել գավառակային (գավ)գործկոմների միջոցով:



1932 թ. 30/9 հետո բաժանորդները պարտատոմսերը և իրենց մուծած գումարները յետ ստանալու իրավունքից զրկվում են:

ԽՍՀՄ Ֆինժողկոմատի Վալյուտային Վարչության պետի օգնական՝ ԼՈՑԵՎԵՑԿԻՅ

Պետփոխառությունների բաժնի վարիչ՝ ԿԱԳԱՆՈՎԻՉ

Ձև № 1.

## ԿՈՆՏՐԱԳԵՆՏԻ ՊԱՐՏԱԳԻՐԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության ինդուստրացման պետական ներքին 3-րդ շահող փոխառության պարտատոմսերի վաճառքին վերաբերող—միանվագ վճարումով (առանց մաս-մաս վճարումի)

1929 թ. . . . . . . . . . . . այս պարտագիրը տրված է . . . .
(օրը, ամիսը)

. . . . . . . . . գյուղխորհուրդին հետևյալ իմաստով՝
(անվանումը գյուղխորհրդի)

1. Ներքոստորագրողս կոնտրագենտը . . . . . . . . . . . . . . . . . . (կոնտրագենտի ազգանունը, անունը և հայրանունը կամ կազմակերպության անվանումը) հանձն է առնում գյուղխորհրդի հանձնարարությունը՝ միանվագ վճարումով (առանց մաս-մաս վճարումի) վաճառել ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսության ինդուստրացման պետական 3-րդ ներքին շահող փոխառության պարտատոմսերը:

2. Պարտատոմսերի վաճառքը կատարվում է հետևյալ գներով՝

| ՎԱՃԱՌՔԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ | Ամբողջ պարտատոմսի համար (50 ռ.) | Պարտատոմսի $^1/_{10}$ մասի համար (5 ռ.) |
|---|---|---|
| 1929 թ. սեպտեմբերի 1-ից առ 10 . . . . | 47 ռ. 90 կ. | 4 ռ. 79 կ. |
| » » 11-ից առ 20 . . . . | 48—10 | 4—81 |
| » » 20-ից առ 30 . . . . | 48—40 | 4—84 |
| » հոկտեմբերի 1-ից առ 10 . . . . | 48—60 | 4—86 |
| » » 11-ից առ 20 . . . . | 48—90 | 4—89 |
| » » 20-ից առ 31 . . . . | 49—10 | 4—91 |
| » նոյեմբերի 1-ից առ 10 . . . . | 49—40 | 4—94 |
| » » 10-ից առ 20 . . . . | 49—60 | 4—96 |
| » » 21-ից առ 30 . . . . | 49—90 | 4—99 |

3. Կոնտրագենտը պարտավորվում է գյուղխորհրդին հանձնել պարտատոմսերի վաճառքի գանձած դրամը № 6 ձևի հաշվետեղեկագրով (այս պարտագրին կցված)—տասնօրյակներով՝ ամեն ամսի 1-ին, 11-ին և 21-ին, սկսելով 1929 թ. սեպտեմբերի 11-ից և վերջացնելով 1929 թ. դեկտեմբերի 2-ին (դեկտեմբերի 1-ն աշխատանքի օր չէ): Դրամները հանձնելիս՝ կոնտրագենտը գյուղխորհրդից անդորրագիր է ստանում:

4. Դրամները հանձնելիս՝ կոնտրագենտն իր օգտին վարձատրության է վերցնում իր վաճառած պարտատոմսերից գանձված ամեն մի ռուբլուց մեկ կոպ., և փոստային իրական ծախսերը: Կոնտրագենտը գանձված դրամից ուրիշ վոչ մի հանում չի անում և իր բոլոր ծախսերն իր ստանալիք վարձատրությունից է հատուցում:

5. Պարտատոմսերի, կտրոնների և պարտատոմսերի վաճառքից գանձած դրամների պահպանման համար՝ կոնտրագենտը լիովին պատասխանատու չէ իր գույքով: Կորցրած պարտատոմսերի արժեքը կոնտրագենտը պարտավոր է հատուցել փոխառության պարտատոմսերի վաճառքի գնով, հաշիվ առնելու օրը: Յեթե դեպք լինի, վոր փոխառության տոկոսաբեր տեսակի պարտատոմսերը հանձնելիս՝ կտրոնները պակաս լինեն, կոնտրագենտը պարտավորվում է նույնպես վճարել պակաս կտրոնների անվանական արժեքը:

6. 1929 թ. նոյեմբերի 30-ին կոնտրագենտը վերջացնում է պարտատոմսերի վաճառքը և 1929 թ. դեկտեմբերի 2-ին հաշվետեղեկագրով գյուղխորհրդին է հանձնում դրամների հետ միասին նաև բոլոր անվաճառ պարտատոմսերը:

7. Գյուղխորհուրդն իրավունք ունի ամեն ժամանակ կոնտրագենտի պարտատոմսերը վաճառելու լիազորությունը դադարեցնել: Այդ դեպքում կոնտրագենտը պարտավորվում է մեկ շաբաթվա ընթացքում գյուղխորհրդին հանձնել հաշիվը, դրամներն ու պարտատոմսերը:

8. 3, 6 և 7 կ. կ. սահմանված ժամկետները հետաձգելու համար՝ կոնտրագենտը պարտավորվում է վոչ միայն դրամները վճարել և պարտատոմսերը վերադարձնել, այլ և տույժ հատուցել ժամկետանցի սկզբից մինչև հաշվետեսի օրը ժամկետին չհանձնած գումարի, կամ ժամկետին չհանձնած պարտատոմսերի և կտրոնների անվանական գնի 1/15%, ամեն մի ժամկետանց օրվա համար (ամսական 2%):

Կոնտրագենտը պարտավորվում է նույնպես հատուցել այն վնասները, վոր առաջացել են այս պարտագրի խախտումից:

9. Յեթե դատական գործ ծագի, պետք է գործը քննվի գյուղխորհրդի տեղումը գտնվող դատարանում:

10. Պարտագիրն ստորագրում է կոնտրագենտը յերկու օրինակով:

Պարտագրի յերկու օրինակն էլ վավերացվում են գյուղխորհրդի ստորագրությամբ և կնիքով: Պարտագրի մեկ օրինակը պահվում է գյուղխորհրդում, իսկ մյուսը տրվում է կոնտրագենտին:

Կոնտրագենտի ստորագրությունը.

Գյուղխորհրդի ստորագրությունը.

Գյուղխորհրդի կնիքը.

## ՊԱՐՏԱԳԻՐ

Ձև № 2

Կոնտրագենտի՝ գյուղխորհրդին ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության
Ինդուստրացման պետական 3-րդ շահող փոխառության մաս-մաս վճարում-
ներով վաճառված պարտատոմսերի մուծումներն ընդունելու համար:
տրված է այս պարտագիրը

1929 թ.

(օրը, ամիսը)

. . . . . . . . . . . . . . գյուղխորհրդին, հետևյալ իմաստով՝

(գյուղխորհրդի անվանումը)

1. Ներքո ստորագրող կոնտրագենտը (ազգանունը) . . . . . . .
(կոնտրագենտի անունն ու հայրանունը, կազմակերպության անվանումը)
հանձն է առնում գյուղխորհրդի հանձնարարությունը ԽՍՀՄ Ժողովրդական



Տնտեսության Ինդուստրացման պետական 3-րդ ներքին շահումների փոխառության մաս-մաս վճարումով վաճառելիք պարտատոմսերի համար բաժանորդագրություն հավաքել և գնորդների պարտատոմսերի համար մաս-մաս վճարումով մուծումներ ստանալ ու հանձնել գյուղխորհրդին:

2. Պարտատոմսերի վաճառքը—մաս-մաս վճարման կարգով, կատարվում է 1929 թ. սեպտեմբերի 1-ից առ 30 նոյեմբերի այն գյուղացիներին, վորոնք ընտրական իրավունքներով են օգտվում խորհուրդներում: Առաջին մուծումը վճարելուց հետո (սեպտեմբերին, հոկտեմբերին կամ նոյեմբերին), պարտատոմսերի մնացած արժեքը գնորդը ծածկում է . . . .
. . . . . . . . [1]) ամենամսյա հավասար մուծումներով:

3. 1-ին մուծումը հավաքելիս՝ գյուղխորհուրդը կոնտրագենտին է տալիս հաշվեանդորրագիրը և նրա արմատը: Բաժանորդից 1-ին մուծումի ստացումը կոնտրագենտը նշանակում է հաշվեանդորրագրի և նրա արմատի մեջ և հաշվեանդորրագիրը տալիս է բաժանորդին: Բաժանորդն էլ, իր հերթին, իր ստորագրությամբ վավերացնում է կոնտրագենտի գրածը անդորրագրի արմատում և նշում է մուծումի վճարի ժամանակը: Հաշվեանդորրագրի արմատը՝ ստացված դրամների հետ միասին, կոնտրագենտը հանձնում է գյուղխորհրդին (կ. 5):

4. Հետևյալ ամեն մի մուծումն ստանալու համար՝ գյուղխորհուրդը
կոնտրագենտին տալիս է բաժանորդի հաշվեանդորրագրի արմատը: Հաշ-
վեանդորրագրի արմատը և այս պարտագիրը բաժանորդին ներկայացնելը
ցանում է ապացույց, թե կոնտրագենտը մուծումն ստանալու իրավունք
ունի: Կոնտրագենտը պարտավոր է մուծումների ընդունելությունը մեխ-
նույն կարգով ձևակերպել, ինչ կարգ վոր սահմանված է առաջին մուծումի
համար. այսինքն՝ կոնտրագենտը ընդունած գումարը հաշվեանդորրագրի
մեջն է գրում, վորը գտնվում է բաժանորդի ձեռքին և այդ գրածը հաստա-
տում է իր ստորագրությամբ: Մուծումի ընդունված գումարը կոնտրա-
գենտը նշանակում է հաշվեանդորրագրի արմատում: Այդ գրանցման ճըշ-
տությունը և դրամները վճարելու ժամանակը բաժանորդը հաստատում է
իր ստորագրությամբ անդորրագրի արմատում: Անդորրագրերի արմատ-
ները կոնտրագենտը հանձնում է գյուղխորհրդին՝ ստացած դրամների հետ
միասին (կ. 5):

5. Հաշվեանդորրագրերի արմատները և ստացված դրամը կոնտրագենտը
պարտավորվում է հանձնել գյուղխորհրդին . . . . . [2]) օրվա ժամ-
կետով, բաժանորդից դրամներն ստանալու մոմենտից սկսած:

6. Կոնտրագենտը պարտավորվում է մաս-մաս վճարող բաժանորդներին
բաժանել գնված պարտատոմսերի ամրացման տալոնները: Այդ տալոնների
ստացման համար՝ կոնտրագենտը գյուղխորհրդին
է տալիս և ամրացման տալոնները հանձնում է բաժանորդներին, նրանցից ստորագրություն առնելով ամրացման տալոնների արմատում: Ամրացման տալոնների, ինչպես և նրանց կես արմատների
ներ կամ հաշվեանդորրագրի արմատում:

---

[1]) Գյուղխորհրդի մուծումների քանակը դնում է պարտագիրն ստանալիս: Գյուղխորհուրդը մուծումների քանակը վորոշում է շրջ(նահ)գործկոմի վորոշման համաձայն:

[2]) Որերի թիվը դնում է գյուղխորհուրդը պարտագիրն ստանալիս:

և հաշվեանդորրագրերի արմատները, բաժանորդների ստացականների հետ, կոնտրագենտը հանձնում է գյուղխորհրդին, բաժանորդներից ստացված դրամների հերթական մուծման ժամանակ:

7. Այս պարտագիրը կատարելու և իր արած ծախսերի փոխհատուցման համար՝ կոնտրագենտը ամեն անգամ դրամ հանձնելիս վարձատրություն է ստանում գյուղխորհրդից մեկ կոպ., ամեն մի ռուբլուց, որ մուծնում է գյուղխորհուրդ (կ. 5):

8. Գյուղխորհուրդն իրավունք ունի ամեն ժամանակ դադարեցնել կոնտրագենտին տված հանձնարարությունը: Այդ դեպքում կոնտրագենտը պարտավոր է մեկ չորսօրյա ընթացքում գյուղխորհրդին հանձնել բաժանորդներից ստացված դրամները, հաշվեանդորրագրերը, ամբողջման տալոնները ու նրանց արմատները:

9. Բաժանորդներից մաս-մաս վճարումով ստացված մուծումների պահպանության համար՝ կոնտրագենտը պատասխանատու յե գույքով:

Սահմանված ժամկետներում մուծումները գյուղխորհրդին չհանձնելու համար (կ. կ. 5 և 8), կոնտրագենտը պարտավորվում է վոչ միայն դրամները վճարել, այլ և տույժ տալ հետաձգման օրից մինչև հաշիվ տեսնելու օրը ժամկետին չհանձնված գումարի 1/15% հետաձգման ամեն մի օրվա համար (ամսական 2%): Բացի դրանից, կոնտրագենտը պարտավոր է հատուցել այն վնասները, որ առաջ են յեկել այս պարտագիրը խախտելուց:

10. Յեթե դատական գործ ծագի, գործը պետք է քննվի գյուղխորհրդի տեղում գտնվող դատարանում:

11. Պարտագիրն ստորագրում է կոնտրագենտը յերկու օրինակով և յերկու օրինակն էլ հաստատվում է գյուղխորհրդի ստորագրությամբ և կնիքով: Մեկ օրինակը տրվում է կոնտրագենտին, մյուսը՝ մնում է գյուղխորհրդում:

Կոնտրագենտի ստորագրությունը.

Գյուղխորհրդի ստորագրությունը.

Գյուղխորհրդի կնիքը.

Ձև № 9

## ԿՈՆՏՐԱԳԵՆՏԻ ՊԱՐՏԱԳԻՐԸ ԳԱՎԱՌԱԿԻ ԿԱՄ ԳԱՎԱՌԻ ԳՈՐԾԿՈՄԻՆ.

(Վարկային հիմնարկների համար՝ խնայդրամարկղների, գյուղատնտեսական վարկային ընկերությունների և այլն):

1929 թ.

(օրը, ամիսը) (հիմնարկի կամ կազմակերպության անվանումը) անվանվող, հետագայում «կոնտրագենտ» տվեց գավառակի (գավառի) գործկոմին պարտագիր հետևյալ իմաստով՝

1. Կոնտրագենտը հանձն է առնում ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության Ինդուստրացման պետական 3-րդ ներքին շահող փոխառության պարտատոմսերի վաճառքը:

2. Կոնտրագենտը պարտավորվում է ճշտությամբ կատարել ԽՍՀՄ ԺԿԿ 1929 թ. հուլիսի 5-ի հրահանգի իրեն վերաբերող բոլոր պահանջները, Ինդուստրացման 3-րդ փոխառության իրացման կարգի մասին՝ գյուղական վայրերում:



3. Կոնտրագենտը պարտավորվում է պարտատոմսեր վաճառել՝

ա) միանվագ վճարումով (առանց մաս-մաս վճարելու), բ) մաս-մաս վճարումով գավառակի (գավառի) գործկոմի սահմանած ժամկետներին այն գյուղացիներին, վորոնք օգտվում են ընտրական իրավունքներով. գ) մաս-մաս վճարումով՝ բանվորների և ծառայողների կոլեկտիվներին:

4. Կոնտրագենտը պարտավորվում է պարտատոմսերը վաճառել այն գներով և պայմաններով, վոր սահմանված են ԽՍՀՄ ԺԺԿ հրահանգով (կ. 2)՝ ա) առանց մաս-մաս վճարման վաճառքի համար, բ) պարտատոմսերը մաս-մաս վճարումով գյուղացիներին վաճառելու համար և գ) բանվորների և ծառայողների կոլեկտիվներին պարտատոմսեր վաճառելու համար:

5. Կոնտրագենտը վաճառելու պարտատոմսերն ստանում է գավառակի (գավառի) գործկոմից:

6. Պարտատոմսերի վաճառքից գանձված դրամները կոնտրագենտը պարտավորվում է լրիվ հանձնել կամ ուղարկել գավառակի (գավառի) գործկոմին 1929 թ. սեպտեմբերի 1-ից առ 1-ն դեկտեմբերի ժամանակի ընթացքում, ամեն ամսի 12-ին, 22-ին և 2-ին, սկսելով 1929 թ. սեպտեմբերի 12-ից և վերջացնելով դեկտեմբերի 2-ին, հաշիվները տեսնելու մնացած ժամանակի ընթացքում՝ ամիսը 2 անգամ՝ ամեն ամսի 17-ին և 2-ին: Դրամները հանձնելիս կոնտրագենտը գավառակի (գավառի) գործկոմից ստացման անդորրագիր է ստանում:

7. Դրամները հանձնելիս՝ կոնտրագենտը հանում է փոստային ծախսերը՝ իրական գնով և կոմիսիոն վարձատրություն 1 կոպ., ամեն մի ռուբլուց, վոր գանձվել է գյուղացիներին միանվագ և մաս-մաս վճարումով վաճառած պարտատոմսերից և ½ կոպ. ամեն մի ռուբլուց, վոր գանձվել է բանվորների և ծառայողների կոլեկտիվներին վաճառած պարտատոմսերից: Բացի փոստային ծախսերը ծածկելուց և կոմիսիոն վարձատրությունից, կոնտրագենտը վոչ մի ուրիշ հատուցում չի ստանում և իր բոլոր ծախսերը լրացնում է ստանալիք կոմիսիոն վարձատրությունից:

8. Ստանալիք կոմիսիոն վարձատրության հաշվին (կ. 7) կոնտրագենտը պարտավոր է բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանորդագրության կազմած օժանդակող ստորին հանձնաժողովներին մասնացրել ¼ կոպ. ամեն մի ռուբլուց, վոր վճարել է կոնտրագենտին բանվորների և ծառայողների կոլեկտիվը: Օժանդակող ստորին հանձնաժողովներին մասնատրումը հետևյալ կարգով է կատարվում. հասանելի մասնատրման կեսը տրվում է իրացման ժամանակաշրջանի վերջում, այսինքն 1929 թ. 2/12, մնացած կեսը տրվում է օժանդակող հանձնաժողովներին վաճառված պարտատոմսերի համար վերջնական հաշիվը տեսնելիս կոլեկտիվի հետ:

9. Գավառակային (գավ)գործկոմն իրավունք ունի ամեն ժամանակ դադարեցնել այս հանձնարարությունը: Այդ դեպքում կոնտրագենտը պարտավորվում է մեկ չորսօրյա ընթացքում գավառակային (գավ)գործկոմին ներկայացնել հաշիվը, դրամները պարտատոմսերը:

10. Պարտատոմսերի և նրանց վաճառքից գանձված դրամների պահպանության համար՝ կոնտրագենտը լիովին պատասխանատու յե իր գույքով:

կրած պարտատոմսերի արժեքը կոնտրագենտը պարտավորվում է հատուցել նրանց վաճառքի գնով հաշվետուի օրը: Այն դեպքում, յերբ տոկոսաբեր տեսակի պարտատոմսերն են հանձնվում պակաս կտրոններով, կոնտրագենտը պարտավորվում է նույնպես հատուցել պակաս կտրոնների անվանական գինը:

11. Կոնտրագենտը 1929թ դեկտեմբերի 2-ի հաշվետուի ժամանակ գավառակային (գավառային) գործկոմին է հանձնում բոլոր անվաճառ մնացած պարտատոմսերը: 1930 թ. հունվարի 10-ին կոնտրագենտը բաժանորդագրությանը վերաբերյալ իր բոլոր հաշիվները փակում է գավառակային (գավառային) գործկոմի հետ:

Այդ ժամկետից հետո մինչև 1929 թ. հուլիսի 31-ը ներառյալ, կոնտրա- [illegible] հաշվեանդորրագրեր և ամրացման տալոններ և փոխանակում լրիվ վճարված պարտատոմսերի հետ: 1930 թ. օգոստոսի 1-ին կոնտրագենտը գավառակային (գավառային) գործկոմին է հանձնում գնորդներին չտրված լրիվ վճարված պարտատոմսերը, հաշվեանդորրագրերի և ամրացման տալոնների արմատները, վորոնք չեն պահանջվել պարտատոմսերի գնորդների կողմից:

12. 6, 9 և 11 կետերով սահմանված ժամկետներն հետաձգելու համար՝ կոնտրագենտը պարտավորվում է բացի չհանձնված դրամները վճարելուց և պարտատոմսերը վերադարձնելուց, նաև տույժ վճարել ժամկետին չհանձնված գումարի կամ ժամկետին չհանձնած պարտատոմսերի և կտրոնների անվանական արժեքի 1/15% հետաձգված ամեն մի օրվա համար (ամիսը 2%), հաշվելով հետաձգման սկզբի օրվանից մինչև հաշվետուի օրը: Կոնտրագենտը պարտավորվում է նույնպես հատուցել այն վնասները, վոր առաջ են յեկել այս պայմանագրի խախտումից:

13. Յեթե դատական գործ ծագելու դեպք լինի, գործը պետք է քննվի գավառակային (գավառային) գործկոմի տեղի դատարանում:

14. Կոնտրագենտը պայմանագիրն ստորագրում է 2 օրինակով և 2-ն էլ հաստատվում են գավառակային (գավառային) գործկոմի ստորագրությամբ և կնիքով: Մեկ օրինակը հանձնվում է կոնտրագենտին, մյուսը մնում է գավառակային (գավառային) գործկոմում:

Կոնտրագենտի ստորագրությունը.

Գավառակային (գավառային) գործկոմի ստորագրությունը:

Գավառակային (գավառային) գործկոմի կնիքը.

Ձև № 10

# Պ Ա Ր Տ Ա Գ Ի Ր

Փոստ-հեռագրական ձեռնարկության (կապի բաժանմունքի, իսկ յեթե նա գավառակային (գավառային) գործկոմի տեղում չի գտնվում,—հանգույցային գործակալության)՝ գավառակային (գավառային) գործկոմին:

1929 թ. . . . . . . .

(օրը, ամիսը,) (փոստ-հեռագրական ձեռնարկ. անվանումը)

վոր այսուհետև կոչվելու յե «կոնտրակենտ» տալիս է:

գավառակային (գավառային) գործկոմին հետևյալ պարտագիրը.

1. Կոնտրագենտը հանձն է առնում վաճառել ԽՍՀՄ Ժողովրդական Տնտեսության ինդուստրացման պետական 3-րդ ներքին շահող-փոխառության պարտատոմսերը:

2. Կոնտրագենտն իր պատասխանատվությամբ պարտավորվում է կազ-



մակերպել փոխառության իրացման փոստ-հեռագրական ամբողջ ցանցի միջոցով,—վոր գտնվում է գավառակում (գավառում), այսինքն կապի բաժանմունքների, գործակալությունների, շրջիկների և գյուղնամակատարների միջոցով: Նրանց կից խնադրամարկղներին՝ ազատված աշխատակիցներով, գավառակային (գավառային) գործկոմն է ներգրավում վաճառքի գործին անմիջապես, առանձին պայմանագրով:

3. Կոնտրագենտը և նրա ներգրաված փոստհեռագրական ձեռնարկության ցանցը և նամակատարները պարտավորվում են ճշտությամբ կատարել ԽՍՀՄ Ֆ.Ժ.Կ 1929 թ. հուլիսի 5-ի հրահանգի պահանջները, վոր վերաբերում են 3-րդ փոխառության իրացմանը գյուղական վայրերում: Այդ հրահանգին ծանոթացել է կոնտրագենտը և հրահանգը հանձնված է նրան:

4. Կոնտրագենտը պարտատոմսերը վաճառում է թե միանվագ (վոչ մաս-մաս) և թե մաս-մաս վճարումներով: Բանվորների և ծառայողների կոլեկտիվներին՝ կոնտրագենտը և նրա ցանցը պարտատոմսեր չեն վաճառում:

5. Պարտատոմսերը միանվագ վճարումով վաճառվում են յուրաքանչյուր տասն օրը մի անգամ փոփոխվող գներով, վոր նշված են ԽՍՀՄ Ֆ.Ժ.Կ հրահանգում (պայմանագրի 3 կետ):

Պարտատոմսերի մաս-մաս վճարումով վաճառքը կոնտրագենտը կատարում է անվանական գներով, մաս-մաս վճարման այն ժամկետով, վոր սահմանել է շրջ(նահ)գործկոմը:

Մաս-մաս վճարով պարտատոմսեր գնելու համար բաժանորդագրության հավաքելը և այդ բաժանորդագրությամբ մուծումներ ստանալը կատարում են թե կոնտրագենտը անմիջապես և թե նրա կողմից փոխառության իրացմանը ներգրավված փոստ-հեռագրական ձեռնարկություններն ու գյուղնամակատարները:

6. Մաս-մաս վճարումով պարտատոմսեր գնելու համար բաժանորդագրություն հավաքելը, բաժանորդներից մաս-մաս վճարումներով գնված պարտատոմսերի մուծումներն ստանալը կատարում են կոնտրագենտը և նրա ներգրավված գործակալությունները, շրջիկները և գյուղնամակատարները այն կանոններով, վոր ԽՍՀՄ Ֆ.Ժ.Կ 1929 թ. հուլիսի 5-ի հրահանգով սահմանված են գյուղխորհրդի համար՝ գյուղական վայրերում փոխառությունն իրացնելու մասին:

7. Գավառակային (գավառային) գործկոմը պարտատոմսեր է մատակարարում կոնտրագենտին թե նրա անձնական վաճառքի և թե նրա կողմից ներգրավված ցանցի վաճառքի համար:

8. Պարտատոմսերի վաճառքին վերաբերող հաշվետվությունը և բոլոր հաշիվները, թե իրեն և թե ներգրավված ամբողջ ցանցի համար, կոնտրագենտն է վարում գավառակային (գավառային) գործկոմի հետ:

9. Պարտատոմսերի վաճառքից թե իր և թե մնացած ցանցի գանձած դրամները կոնտրագենտը պարտավորվում է լրիվ հանձնել գավառակային (գավառային) գործկոմին՝ ա) 1929 թ. սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 3 ժամանակի ընթացքում—ամեն ամսի 13, 23 և 3, սկսելով սեպտեմբերի 13-ից, բ) հաշվետուի մնացած ժամանակի ընթացքում ամիսը 2 անգամ—ամեն ամսի 3 և 20:

Կոնտրագենտը պարտավորվում է մնացած ցանցի հաշվետվությունն ու դրամների հանձնումն այնպես կազմակերպել, որ նշված ժամկետների կատարումն ապահովված լինի:

10. Պարտատոմսերի վաճառքից թե կոնտրագենտը և թե մնացած ցանցն ուրիշ որևէ հատուցում չեն ստանում:

11. Կոմիսիոն վարձատրությունը բաշխվում և վճարվում է հետևյալ կարգով՝

ա) Գյուղնամակատարները, շրջիկները և գործակալությունները (հաստիքավոր և անհաստիք) պարտատոմսերի միանվագ վճարումով վաճառքից գանձված ամեն մի ռուբլուց 1 կոպ. են ստանում, իսկ պարտատոմսերի մաս-մաս վճարումով վաճառքի մուծումները հավաքելու համար՝ 3/4 կոպ.՝ հավաքած ամեն մի ռուբլուց.

բ) Կոնտրագենտն ստանում է 1 կոպեկ ամեն մի ռուբլուց, որ գանձել է ինքը թե միանվագ վճարումով և թե մաս-մաս վճարումով վաճառքներից, և՝ բացի դրանից, 1/4 կոպ. ամեն մի ռուբլուց, որ հավաքել են գյուղնամակատարները, շրջիկները և գործակալությունները պարտատոմսերի մաս-մաս վճարումով վաճառքից:

Գյուղնամակատարները, շրջիկներն ու գործակալությունները կոմիսիոն վարձատրությունը հանում են դրամները կոնտրագենտներին հանձնելիս, իսկ կոնտրագենտը՝ դրամները գավառակային (գավառային) գործկոմին հանձնելիս:

12. Գավառակային (գավառային) գործկոմն իրավունք ունի ամեն ժամանակ դադարեցնել այս հանձնարարությունը: Այդ դեպքում կոնտրագենտը պարտավորվում է յերկու շաբաթվա ընթացքում գավառակային (գավառային) գործկոմին հանձնելու հաշիվները, դրամները և պարտատոմսերը:

13. Պարտատոմսերի և նրանց վաճառքից գանձված դրամների պահպանության համար կոնտրագենտը լիովին պատասխանատու յե իր գույքով թե իր և թե մնացած ցանցի կողմից: Կորած պարտատոմսերի արժեքը կոնտրագենտը պարտավոր է հատուցել նրանց վաճառքի գնով, հաշվետեսի օրը: Այն դեպքում, յերբ կոնտրագենտը տոկոսաբեր տեսակի պարտատոմսեր է հանձնում պակաս կտրոններով, նա պարտավորվում է հատուցել նաև պակաս կտրոնների անվանական արժեքը:

14. Կոնտրագենտը հանձնում է գավառակային (գավառային) գործկոմին՝ ա) 1929 թ. դեկտեմբերի 3-ի հաշվետեսին թե իր և թե մնացած ցանցի կողմից անվաճառ մնացած պարտատոմսերը, բ) 1930 թ. . . . . . .
[1]) վերջնական հաշվետեսի ժամանակ, կոնտրագենտը գավառակային

[1]) Հաշիվները վերջնականապես փակելու ժամանակը, նշանակում է գավառակային (գավառային) գործկոմը հետևյալ հաշվով՝ 1929 թ. նոյեմբերի 30-ից հաշվելով ավելացվում է այնքան ամիս, որքան ամիս շրջ(նահ)գործկոմի որոշումով տրվել է գյուղացիներին մաս-մաս վճարումով պարտատոմսեր գնելու համար և ստացած ամսաթվի վրա ավելացվում է դարձյալ 7 օր: Օրինակ՝ յեթե շրջգործկոմը մաս-մաս վճարման ժամանակը 4 ամիս է նշանակել, կոնտրագենտը վերջնական հաշիվը պետք է տա 1930 թ. ապրիլի 7-ին:



(գավառային) գործկոմին է հանձնում թե իր և թե մնացած ցանցի մոտ յեղած լրիվ վճարված պարտատոմսերը, որ գնորդներին չեն տվել, հաշվել անդորրագրերի արմատները, ամրացման տալոնների արմատներն այն լրիվ վճարված պարտատոմսերի, որ գնորդները չեն պահանջել, պարտատոմսերի հետ փոխանակված հաշվեանդորրագրերը, ինչպես և հաշվեանդորրագրերի չօգտագործված և փչացած բլանկները:

15. 9, 12 և 14 կետերով սահմանված ժամկետները հետաձգելու համար կոնտրագենտը պարտավորվում է՝ բացի չհանձնված դրամները վճարելուց և պարտատոմսերը վերադարձնելուց, վճարել նաև տույժ ամեն մի հետաձգված օրվա համար $^{1}/_{15}$ % այն գումարի, որ ժամկետին չի հանձնվել կամ ժամկետին չհանձնված պարտատոմսերի և կտրոնների անվանական գների (ամսական 2%), հաշվելով հետաձգման առաջին օրվանից մինչև հաշվետեսի օրը: Կոնտրագենտը պարտավորվում է նույնպես հատուցել այն վնասները, որ առաջացել են այս պարտագրի խախտումից:

16. Յեթե դատական գործ ծագելու դեպք լինի, գործը պետք է քննվի գավառակային (գավառային) գործկոմի տեղումը գտնվող դատարանում:

17. Պարտագիրն ստորագրվում է յերկու օրինակով: Մեկ օրինակը պահվում է գավառակային (գավառային) գործկոմում, գավառակային (գավառային) գործկոմի ստորագրությամբ և կնիքով վավերացված, մյուս օրինակը պահվում է կոնտրագենտի մոտ:

Կոնտրագենտի ստորագրությունը.

Գավառակային (գավառային) գործկոմի
ստորագրությունը.

Գավառակային (գավառային)
գործկոմի կնիքը.

ՀՀ Ազգային գրադարան
NL0205646

27932

6º

1929-30